ԱՆՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՏԻՐԱՄՈՐ ՃԻՉԸ

ՄՐԱՆՕՐԻՆԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ա 105925

ԱՆՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՏԻՐԱՄՈՐ ՃԻՉԸ

Փաստագրական ողբերգություն
ըստ «Օրագրության»
Մարիա Յակոբսոնի

(1907-1919 թթ., Խարբերդ)

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳ. ԱԿԱԴ.
ՀԻՄՆԱՐԿԱ ԳՐԱԴԱՐԱՆ

ՄԱՐԻԱ ՅԱԿՈԲՍՈՆ

(1882-1960)

«Ինչ տեսակ երկիր, ինչ ժողովուրդ և ինչ դժբախտություն: Որքան եմ ուզում օգնել, պաշտպանել նրանց, որ դժբախտության և չարչարանքի մարմնացում են... Պաշտպանել նրանց թշնամիներից... Բայց ես ոչինչ չունեմ տալու նրանց բացի սիրուց... Սակայն սերը աշխարհի ամենահզոր ուժն է... Ես սիրով այստեղ եկա... Սիրով՝ հանդեպ այս ժողովուրդը...»:

Այս խոսքերը դանիացի Մարիա Յակոբսոնինն են, որը հայկական կոտորածների, կեղեքումների, մահասարսուռ չարության առջև պարզեց մարդասիրության իր փառահեղ ոգին:

Մարիա Յակոբսոնը ծնվել է Դանիայի Հորս քաղաքում, 1882 թ.: Հայաստանի և հայերի մասին առաջին անգամ լսել է 1895 թ. կոտորածների կապակցությամբ: 1907 թ. ավարտելով գթության քույրերի դասընթացը մեկնում է Խարբերդ, որտեղ մյուս միսիոներների հետ հիմնադրում են հիվանդանոցներ: Մ. Յակոբսոնը ականատես է լինում 1915 թ. թուրքական դաժանություններին, հայերի կոտորածներին: Պատերազմի ավարտից հետո քեմալական կառավարությունը Թուրքիայից վտարեց բոլոր եվրոպական և ամերիկյան բարեգործական կազմակերպություններին: Մ. Յակոբսոնը զրկվելով ողջ մնացած հայերին օգնելու հնարավորությունից, գնաց Լիբանան, որտեղ զբաղվեց որբահավաքությամբ: 1922-ին Սայդայում նրա ջանքերով բացվեց «Թռչնոց բույն» որբանոցը: 1928 թ. որբանոցը փոխադրվեց Բեյրութի մերձակա Ջիբեյլի ավանը: Խնամել ու կրթել է հազարավոր որբերի և արժանացել «Մամա» անվանը: Թողել է «Օրագրություն» հուշագրությունը, որը մի արժեքավոր վկայություն է թուրքական հայաջինջ քաղաքականության մասին: Մ. Յակոբսոնը իր մահկանացուն կնքել է 1960 թվականին և թաղվել է «Թռչնոց բույնի» պարտեզի մի գեղեցիկ անկյունում:

Աշխարհը լի է բարության մասին հրաշալի պատմություններով ու ասքերով: Սակայն այն նվիրյալների հիշատակը, որոնք եկան բգկտված երկրին անմնացորդ ծառայելու, մեզ՝ հայերիս համար ուրիշ նշանակություն ունի:

Այս թատերգությունը նրանցից մեկի՝ Մարիա Յակոբսոնի մասին է, նրա խնկելի հիշատակը կենդանի պահելու մի դրվագ:

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

1. Մարիա Յակոբսոն
2. Առաջին այցելու
3. Երկրորդ այցելու
4. Երրորդ այցելու
5. Չորրորդ այցելու
6. Հինգերորդ այցելու
7. Վեցերորդ այցելու
8. Միքայել
9. Զարուհի
10. Ականատես վկա Ա
11. Ականատես վկա Բ
12. Ականատես վկա Գ
13. Փառանձեմ
14. Պետրոս
15. Մարիամիկ
16. Աշխեն
17. Որբ աղջնակ
18. Թուրք երեխաներ Ա և Բ
19. Սինգահար
20. Դանիել
21. Լևոն
22. Սերոբ
23. Տիրան
24. Հեղինե
25. Վարդիկ
26. Ճերմակազգեստ տղամարդիկ
27. Ճերմակազգեստ օրիորդներ
28. Ճերմակազգեստ մանուկներ
29. Ճերմակազգեստ կանայք Տեր Զորից
30. «Թռչնոց բույնի» սաներ
31. Պահակ

I

Կինը խավարում է: Թույլ առկայծում է միայն դեմքը, որը քարացել է ողբերգական արտահայտությամբ: Հայացքը կարծես ուղղված է ահասարսուռ տեսարանի, որը բացվել է հիշողության անդունդներում: Ահա այնտեղից էլ նրա լսողությանն են հասնում ՏՂԱՄԱՐԴՈՒ ձայնը, որը խոսում է հստակ, ոգևորված արվեստի կանոններով, և նաև մենավոր ՄԱՆԿԱՆ ահաբեկված շշուկը, ահա և ՈՒՐԻՇ ահաբեկված ձայներ, որ հետզհետե դառնում են հուսահատ, ողբերգական աղաղակներ...

ՏՂԱՄԱՐԴՈՒ ՁԱՅՆ - Մի մոռանաք, որ մեր նախահայրերը եկել են Թուրանեն, և այսօր Անդրկովկասեն, ինչպես նաև Կասպից ծովեն արևելք ընկած ընդարձակ հողամասերու վրա թուրք ցեղեր կապրին, ավաղ, մեր դարավոր թշնամի Ռուսիո լծի տակ: Մեր սրբազան պարտքն է իրականացնել միությունը թուրք ցեղին Միջերկրականեն մինչև ծայր արևելք՝ Խաղաղ օվկիանոս: Այդ քաղաքական ծրագրի իրականացման նախապայմանը Հայկական հարցին արմատական լուծումն է: Բնաջնջել հայերը, ահա երիտթուրքերուս կոչը:

ՄԱՆԿԱՆ ՇՇՈՒԿ - Փրկե ինձ, Հիսուս...

Համատարած խավարը կարծես թեթևակի նահանջում է տեսարանում հայտնված ՃԵՐՄԱԿԱԶԳԵՍՏՆԵՐԻ ներկայությունից:

ՈՒՐԻՇ ՁԱՅՆԵՐ - Գիշերների մեջեն արյուններու ալիքը կբարձրանա... Սոսկումով կսուրան հալածված նախիրները հրդեհվող ցորյաններու մեջեն:

ՏՂԱՄԱՐԴՈՒ ՁԱՅՆ - Հայկական տարրի ոչնչացման հարցը վաղուց վճռված է, հանգամանքները արգելք կըլլային մեզի իրականացնել այդ սրբազան գործը: Մենք չենք հանդուրժե, որ հայերը սեպի նման խրված ըլլան իսլամական գոտու մեջ, ռուսական կողմնորոշումներով առաջնորդվին և խանգարեն մեզի մեր համաթուրանական իղձերու իրականացմանը: Ձգտում մը միայն պիտի առաջնորդե մեզի... ջնջել «Հայաստան» անունը Թուրքիայեն»:

ՄԱՆԿԱՆ ՇՇՈՒԿ- Փրկե ինձ, Հիսուս...

ՈՒՐԻՇ ՁԱՅՆԵՐ - Սայլերու ճռինչը ահավոր իրենց վրա դիզված դիակների ծանրության տակ դեպի համայնափոսեր կերկարեն....

ԿԻՆԸ հիմա կարծես խարխափում է ՃԵՐՄԱԿԱԶԳԵՍՏՆԵՐԻ շրջանակում:

ՏՂԱՄԱՐԴՈՒ ՁԱՅՆ - Ջիհադը՝ իսլամին սրբազան պատերազմը, սկսված է: Կառավարությունը կվերցնե ամբողջ պատասխանատվությունը և կիրամայե չխնայել անգամ օրորոցի մանուկները:

ՄԱՆԿԱՆ ՇՇՈՒԿ - Փրկե ինձ, Հիսուս...

ՈՒՐԻՇ ՁԱՅՆԵՐ - Արշալույսները մեր արյունեն են կարմիր: Օրորոցներու մեջեն պայծառ ու սրտակեղեք անմեղությունները իրենց շուրջը երկաթվող եղեռնը կանգիտանան...

ՏՂԱՄԱՐԴՈՒ ՁԱՅՆ - Կայսերական բանակներու մեջ ծառայող վաթսուն հազար հայ զինվոր և սպա զինաթափ են եղած, զորաբաժանումներեն զատված, ընդհանուրի աչքեն հեռու, ծածուկ տեղ մը ոչնչացված:

ՄԱՆԿԱՆ ՇՇՈՒԿ - Փրկե ինձ, Հիսուս...

ՈՒՐԻՇ ՁԱՅՆԵՐ - Տերը հեռացել է երկնքի իր ապարանքեն... Ավերումներու, սրածումներու սև գիշերներ են...

ՏՂԱՄԱՐԴՈՒ ՁԱՅՆ - Ապրիլի 24-ին Կոստանդնուպոլիսի բանտ կը տարվի հայ մտավորականության սերուցքը՝ ութ հարյուր մարդ: Հաշվի չպիտի առնըվի անոնց բոլորի ծառայությունները, որ մատուցած են Թուրքիո տնտեսական և մշակութային գործին: 24 ապրիլի արևածագեն սկսած բնաջնջել հայերը... 24 ապրիլի... 24 ապրիլի...

ՄԱՆԿԱՆ ՇՇՈՒԿ - Փրկե ինձ, Հիսուս...

ՈՒՐԻՇ ՁԱՅՆԵՐ - Իսկ Տերը ու՞ր է... ու՞ր է...

- Դժոխքին տեր Սադայելը Տիրոջը խնջույքի է կանչել... Տերն ընդունել է հրավերքը Մեծ Սատանայի՝ դժոխք է իջել խրախճանելու...

- Լռե՞... Լռե՞...

- Ինչո՞վ երդվիմ, որ դուն հավատաս...

- Եփրատի արյունածոր ջրերով երդվիր... Եփրատի արյունածոր ջրերով...

ԵՐԳ - «Այն եղեմաբուխ գետն է Եփրատը... Այն եղեմաբուխ գետն է Եփրատը...»:

ՈՒՐԻՇ ՁԱՅՆԵՐ - *(Աղոթում են)* «Ի նեդութեան իմում աղաղակեցի առ Տէր Աստուած իմ, որովայնէ դժոխոց աղաղակի իմում՝ լուր, Տէր, ձայնի իմում: Ընկեցեր զիս ի խորս սրտից ծովու, և գետք պաշարեցին զիս... ամենայն զբոսանք քո և ալիք քո անցին ի վեայ իմ: Հեղան զինեւ մինչեւ յոգիս, անդունդ անհնարինք պաշարեցին զիս... Անդունդ անհնարինք...»:

Ինչպես ԱՂՈԹՔԸ դուրս մղեց ԵՐԳԸ, այնպես այս կանացի ԱՆ-

ԾԱՆՈԹ ՁԱՅՆԸ, որը կանչում է ՄԱՐԻԱՅԻՆ, դուրս է մղում Ա-ՂՈԹՔԸ:

ԱՆԾԱՆՈԹ ՁԱՅՆ - Մարիա... Եկ տուն, Մարիա... քո օրը վերջացավ... չես զգա այլևս... Կը համառիս, Մարիա... Կը համառիս... Բաց են դռները քո հավերժական օթևանին... Եկ... Մարիա... Եկ...

ՄԱՐԻԱՆ կարծես հմայված իրեն կանչող ձայնից, այլևս, չզգալով ՃԵՐՄԱԿԱԶԳԵՍՏՆԵՐԻ ներկայությունը, առաջ է մղվում, բերելով լույսը իր հետ:

Լռություն և մթություն:

II

ԹՌՉՆՈՑ ԲՈՒՅՆ

Մի անկյունում մեծ, գեղեցիկ, ուրախ տառերով ցուցանակ է՝ «Թռչնոց բույն»: Շատ մանուկներ են հավաքված ընդարձակ սենյակում: Դաշնամուրի մոտ օրիորդ ՄԱՐԻԱՄԻԿԸ նվագակցում է խմբին: Խումբը ոգևորված երգում է Հայոց այբուբենը:

- Այբ, Բեն, Գիմ, Դա, Եչ, Զա... (և այլն):

Խորքում, բազկաթոռին ընկողմանած ծեր ՄԱՐԻԱ ՅԱԿՈԲՍՈՆԸ հետևում է դասին: Դասն ավարտվում է: ԵՐԵԽԱՆԵՐԸ շրջապատում են ՄԱՐԻԱՅԻՆ:

ՄԱՐԻԱ - Ապրիք... Ապրիք... Շատ գեղեցիկ է... Հիմա վազեք պարտեզ, քիչ մը խաղացեք, որ նորեն դասի նստիք...

Օրիորդ ՄԱՐԻԱՄԻԿԸ նվագում է «Ձեյթունցիների քայլերգը» և երեխաները հպարտ, գլուխները բարձր պահած երգելով հեռանում են:

Միայն մի խումբ դեռ մնում է սենյակում, ինչ-որ բան փսփսալով և կիսաձայն վիճելով:

ՄԱՐԻԱ - Ես հասկացա: Դուք գաղտնիք մը ունիք և կուզեք ինձի հայտնել...

ՄԱՐԻԱՄԻԿ - Մայրիկ Մարիա, դուն թոշակդ Դանեմարքայեն ստացել ես, ծի՞շտ է... Սերոբը, Տիրանը, Վարդիկը չեն հավատա:

ՄԱՐԻԱ - Ստացել եմ: Սակայն, երբ ես թոշակս առնելու ելլամ՝ Բեյրութ կիջնեմ... Ուրեմն դուն ինչպե՞ս գիտցար... *(դադար)* Ատիկա այնպիսի գաղտնիք մըն է, որ չե՞ս ուզե ես իմանամ... Այդ պարագային մի ըսե...

ՄԱՐԻԱՄԻԿ - Ես կըսեմ... կըսեմ... Դուն չես բարկանա...

ՄԱՐԻԱ - Կբարկանամ, եթե կարծես, թե ես իբր կըրնամ վրադ բարկանալ...

ՍԵՐՈԲ - Մայրիկ Մարիա, դուն իսկապե՞ս ստացել ես թոշակդ...

ՄԱՐԻԱ - Հարկավ, Սերոբ, վաղը քեռի Պետրոսին հետ մեր ծիասայլակով «Թռչնոց բույնեն» պիտի իջնեմ:

ՄԱՆՈՒԿՆԵՐ - *(Միասնաբար)* Բեյրութի շուկան...

ՄԱՐԻԱ - Բեյրութի շուկան, որ...

ՄԱՆՈՒԿՆԵՐ - Որ «Թռչնոց բույնի» բոլոր մանուկներուս համար համով-համով պտուղներ առնիս...

ՄԱՐԻԱ - *(Կարծես ինքն էլ մանկացած)* Համով-համով...

ՏԻՐԱՆ - Այսչափ-այսչափ ծմերուկներ *(լայն տարածում է ձեռքերը)*...

ՎԱՐԴԻԿ - Ուրիշ պտուղներ ալ...

ՄԱՐԻԱ - Ուրիշ պտուղներ ալ...

ՍԵՐՈԲ - Պիտի օգնեմ քեռի Պետրոսը դատարկելու պտուղները ծիասայլակեն...

ՄԱՐԻԱ - Անշուշտ... Բոլորս ալ պիտի օգնենք...

ՏԻՐԱՆ - *(Ակնարկելով օրիորդ Մարիամիկը)* Օրիո՞րդն ալ պիտի օգնե...

ՄԱՐԻԱՄԻԿ - Անշուշտ, պիտի օգնեմ...

ՄԱՐԻԱ - Կտեսնի՞ք... Բոլորս ալ պիտի դատարկենք պտուղները... բոլորս ալ... Հիմա վազեք պարտեզ, խաղացեք... Շուտով նորեն դասի պիտի նստիք... Օրիորդ Մարիամիկ...

Օրիորդ ՄԱՐԻԱՄԻԿԸ նորից նվագում է «Զեյթունցիների քայլերգը», երեխաները, գլուխները բարձր պահած՝ հեռանում են: Վազելով ետ է գալիս ՀԵՂԻՆԵՆ:

ՀԵՂԻՆԵ - Մայրիկ Մարիա... Լուսինը կլոր էր, մեծ... Ննջարանիս պատուհանեն տեսա, մեծ, կլոր, փայլուն... Նստել էր պարտեզին ծառի բարձր կատարին... Շատ, շատ սիրուն էր... Ամեն անգամ, երբ լուսինը կդառնա ամբողջական, դուն քո հայրենիքեն թոշակ կստանաս ու մեզի շատ-շատ պտուղներ կառնիս...

Վերջապես ՀԵՂԻՆԵՆ նույնպես հեռանում է: Մարիան նստած է փակ աչքերով, անչափ հոգնած մարդու երևույթով: Օրիորդ ՄԱՐԻԱՄԻԿԸ դանդաղ մոտենում է, նստում նրա ոտքերի մոտ, գլուխը դնելով նրա ծնկներին:

ՄԱՐԻԱՄԻԿ - Դուն այս գիշեր նորե՞ն անքնություն ունեցար...

ՄԱՐԻԱ - *(Շոյելով օրիորդի գլուխը)* Անքնությու՞ն... Ոչ... Արթմնի երազներ հին-հին հիշողություններու անցած-գնացած պատկերներու հարևանությամբ... Ոչ... Քնել եմ, անշուշտ... Հանգիստ եմ, հոգիս... Իջիր պարտեզ երեխաներու քով... Ըսե Աշխենին, որ Նազենիկը հետևե, չվազվզե, թոքաբորբեն նոր է ապաքինվել...

ՄԱՐԻԱՄԻԿ - Մայրիկ, գնա ննջարան ու քիչ մը ննջե, հոգնած կերևիս...

ՄԱՐԻԱ - Բան մը չունիմ, հոգիս... Ելիր, աշխատելու ժամ է:

ՄԱՐԻԱՄԻԿ - Դուն նայե քեզի... Այս պզտիկներու համար խնայե, որ անոնք երկրորդ անգամ դաժանորեն չորբանան...

ՄԱՐԻԱ - Եթե դուն հիմա ինձի Շոպենեն կտոր մը նվագես, ամեն հոգնածություն պիտի ազատ ծգե ինձի...

Օրիորդ ՄԱՐԻԱՄԻԿԸ մոտենում է դաշնամուրին, և մեղեդին դանդաղորեն պարուրում է կնոջ հոգնած հոգին:
Քիչ անց հուզված, արագ ներս է ընկնում ՓԱՌԱՆՁԵՄԸ:

ՓԱՌԱՆՁԵՄ - Դուն նորեն աս ի՞նչ կընես...

ՄԱՐԻԱ - Ի՞նչ կընեմ, Փառանձեմ - ...

ՓԱՌԱՆՁԵՄ - Թոշակդ ստացել ես եվրոպաներեն ու պիտի վաղը երթաս Բեյրութ «Համով-համով պտուղներ առնելու»...

ՄԱՐԻԱ - Ի՞նչ գիտցար...

ՓԱՌԱՆՁԵՄ - Փառանձեմին ա՞լ կըսես՝ ինչ գիտցար... Պարտեզին մեջ ամենքն ալ այդ մասին կխոսին... *(Նմանակելով երեխաներին)* Այսչափ խոշոր-խոշոր ծմերուկներ պիտի առնիք շուկայեն...

ՄԱՐԻԱ - Պետրոսին ըսե թող վաղվան համար պատրաստե կողովները և ծիասայլակը:

ՓԱՌԱՆՁԵՄ - Աս ի՞նչ մարդ է...

ՄԱՐԻԱ - Բայց ես քեզի ի՞նչ ըրի, ինչու՞ ես այդչափ զայրացած:

ՓԱՌԱՆՁԵՄ - Պզտիկները պտուղ չունի՞ն, որ դուն նորեն թոշակդ ամբողջապես կծախսես պտուղին վրա:: Ամեն օր ալ անոնք պտուղ կստանան...

ՄԱՐԻԱ - Կփափագիմ, որ գոնե ամիսը մեկ անգամ լի ու լի հագենան...

ՓԱՌԱՆՁԵՄ - Թոշակդ հայրենիքեդ կղրկեն, որ դուն քուկիդ հոգսերը հոգաս... Քուկիդ:

ՄԱՐԻԱ - Նորեն մի սկսեր... Ես անձնապես որևէ կարիք ու հոգս չունիմ, հասկցա՞ր...

ՓԱՌԱՆՁԵՄ - Չհասկցա: Կըլլա՞ մարդ մը, որ անձնական կարիքի մը տեր չըլլա:

ՄԱՐԻԱ - Չփնփնթա՞ս նե, քեզի այդ պտուղ առնելու գաղտնիքը պիտի հայտնեմ...

ՓԱՌԱՆՁԵՄ - *(Խիստ հտաքրքրված)* Հադե, հադե...

ՄԱՐԻԱ - Անչափ հաճույք կզգամ, երբ ծագուկներս ծիասայլակեն կդատարկեն պտուղները... Հատկապես, երբ իրար կնետեն ծմերուկներ... Ի՞նչ խնդություն է... Կհասկնա՞ս, Փառանձեմ, անոնք

կխնդան... Այդչափ սարսափներ ապրելե վերջը՝ անոնք կխնդան... Անոնց ծիծաղը կգրավե բիբլոսին բարձունքները... Շատ կսիրեմ, մանավանդ, երբ ձմերուկ կուտեն... Տեսե՞լ ես, մինչև ականջները կձմերուկոտվին...

ՓԱՌԱՆՋԵՄ - Իսկ գիշերն ալ երազ կտեսնին, թե լողվոր դարձել են ծովուն մեջ... *(Կանչում է)* Դանիե՜լ, Դանիե՜լ, երկուր: Եկուր կըսեմ... Ինչու՞ կթաքնվիս... Եկուր: Ահավասիկ:

Ներս է մտնում փոքրիկ ԴԱՆԻԵԼԸ և մեղավոր կանգնում Մարիայի դիմաց:

ՄԱՐԻԱ - Բարի լույս, Դանիել...

ԴԱՆԻԵԼ - Բարի լույս, մայրիկ...

ՄԱՐԻԱ - Դուն այս գիշեր նորե՞ն երազդ տեսար, թե բարձր տեղեն ջրվեժ կթափվի...

ԴԱՆԻԵԼ - Ոչ...

ՄԱՐԻԱ - Հապա՞...

ԴԱՆԻԵԼ - Ես ծովուն մեջ լող կուտայի...

ՓԱՌԱՆՋԵՄ - Ան ծովուն մեջ լող կուտար...

ՄԱՐԻԱ - Դուն գնա, տիկին Փառանձեմ, ես Դանիելին գաղտնի խոսք մը ունիմ ըսելու...

ՓԱՌԱՆՋԵՄ - Նորեն գաղտնի...

ՓԱՌԱՆՋԵՄԸ հեռանում է: Դանիելը լալիս է:

ՄԱՐԻԱ - Ինչու՞ կուլաս, Դանիել, դուն մեծ մանչ ես...

ԴԱՆԻԵԼ - Այոո՜...

ՄԱՐԻԱ - Կրնա՞մ քեզի վստահել իմ կյանքիս ամենեն ահավոր գաղտնիքը...

ԴԱՆԻԵԼ - Այոո՜...

ՄԱՐԻԱ - Ուրեմն լսե... Երբ ես շատ-շատ պզտիկ էի, հոն՝ Դանեմարքա, գիշերները ես ալ երբեմն երազ կտեսնեի, թե կտարուբերվիմ ծովուն ալիքներուն վրա... Աս իմ կյանքիս ամենեն լուրջ գաղտնիքը հիմա ես և դուն գիտենք միայն... Թե Աստված կսիրես՝ մեկում չըսես... Ես քեզի ուրիշ բան մընալ պիտի ըսեմ... Այն գիշեր, երբ դուն կտարուբերվիս ծովուն ալիքներուն վրա, հիշե, որ հարկավոր է ափ ելնել... Ծովուն մեջ եղած ատեն՝ կարևորը չխեղդվիլն է և ոչ բնավ թաց սավանը... Հասկցա՞ր...

ԴԱՆԻԵԼ - Այո: Ես քուկիդ գաղտնիքը մեկումը չպիտի ըսեմ...

ՄԱՐԻԱ - Շնորհակալ եմ... Ու՞ր է թաշկինակդ, տուր *(Մաքրում է երեխա-*

յի քիթը) Հիմա վազե պարտեզ և խաղա ընկերներուդ հետ... Վազե...

ԴԱՆԻԵԼԸ դուրս է նետվում: Լույսերը դանդաղ խտանում են: Խավարոտ միջավայրում միայն ՄԱՐԻԱՅԻ դեմքն է լուսավորված, և նորից անծանոթ ձայնն է լռության մեջ:

ԱՆԾԱՆՈԹ ՁԱՅՆ - Մարիա... Եկ տուն, Մարիա... Բաց են դռները հավերժական քո օթևանին...

ՄԱՐԻԱ - Անքնություն իմ... Տառապանք իմ... Արդյոք ուղարկված ես ի վերուստ իմ գաղտնի կամ հայտնի մեղքերուս համար, որպես մեղանչում կամ որպես պատի՞ժ... Հայոց մեջ ապրած իմ ժամանակը եղերական հիշողությամբ լի, որն այսքան տարի ապրելե վերջը հիվանդ կդարձնե ապրած գիշերս... Ահավասիկ, նորից կթակեն հոգուս դռները այցելուները՝ մերթ մեկը, մերթ ալ մյուսը... Կթակեն, կխուժեն առանց հրավեր, մտածումներուս բավիղներեն ներս... Սկիզբը հայտնի է... Իսկ վախճանը՝ ու՞ր...

III
ՏԵՍԱՐԱՆ ԴԱՐՊԱՍԻ ՄՈՏ

ԱՌԱՋԻՆ ԱՅՑԵԼՈՒՆ թակում է դարպասը՝ շտապող մարդու անհամբերությամբ: ՊԱՀԱԿԸ անհանգստացած է և քիչ վախեցած կեսգիշերային ուշ այցելուի պատճառով:

ՊԱՀԱԿ - Ո՞վ է:

ԱՌԱՋԻՆ ԱՅՑԵԼՈՒ - Ճանապարհորդ:

ՊԱՀԱԿ - Ասիկա հյուրատուն չէ:

ԱՌԱՋԻՆ ԱՅՑԵԼՈՒ - «Թռչնոց բույն» որբանո՞ցն է:

ՊԱՀԱԿ- Մանկանոցը, պարոն...

ԱՌԱՋԻՆ ԱՅՑԵԼՈՒ - Միևնույն է...

ՊԱՀԱԿ - Ոչ, պարոն:

ԱՌԱՋԻՆ ԱՅՑԵԼՈՒ - Հայտնե տիրուհուն, որ ես եկել եմ:

ՊԱՀԱԿ - Բայց դուն ո՞վ ես...

ԱՌԱՋԻՆ ԱՅՑԵԼՈՒ - Ես:

ՊԱՀԱԿ - Մինա՞կ ես...

ԱՌԱՋԻՆ ԱՅՑԵԼՈՒ - Մինակ եմ:

ՊԱՀԱԿ - Ադեկ *(Բացում է դարպասը):* Չաղմկես, ամեն մարդ քնած է:

ԱՌԱՋԻՆ ԱՅՑԵԼՈՒ - Անկյունի պատուհանը լույս կա:

ՊԱՀԱԿ - Մայրիկ Յակոբսոնի պատուհանն է: Անոր անքնությունը կտանջե:

IV
ՏԵՍԱՐԱՆ ԴԱՏԱՐԿ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Կիսախավարի մեջ ՄԱՐԻԱՅԻ հուսահատ ճիչը:

ՄԱՐԻԱ - Հեռացի՛ր, էհման...

Պայծառ լուսավորվում է դատարկ տարածությունը: ԱՌԱՋԻՆ ԱՅՑԵԼՈՒՆ և ՄԱՐԻԱՆ դեմ հանդիման են:

ՄԱՐԻԱ - Հեռացիր, էհման...

ԱՌԱՋԻՆ ԱՅՑԵԼՈՒ - Ես գիշերվան խավարի մեջ մեծ չարչարանքով հաղթահարեցի բարձունքներու նեղ ճանապարհը...

ՄԱՐԻԱ - Հեռացիր:

ԱՌԱՋԻՆ ԱՅՑԵԼՈՒ - Դուն սկիզբն ու վախճանը կփնտրես հիշողությանդ բավիղներեն ներս...

ՄԱՐԻԱ - Հեռացիր...

ԱՌԱՋԻՆ ԱՅՑԵԼՈՒ - Ոչ, կմնամ:

ՄԱՐԻԱ - Էհման, դուն երբևէ կխորհի՞ս Աստծո դատաստանի մասին...

ԱՌԱՋԻՆ ԱՅՑԵԼՈՒ - Դուն կհավատա՞ս Աստծո դատաստանին...

ՄԱՐԻԱ - Ուրեմն այն բոլոր ոճիրները, որ դուն խրախուսեցիր Աստծո անունով, ծերբազատված էր քո անհավատարմությա՞մբ... Երկու աշխարհամարտերու՝ ցեղասպանություններու ընթացքին քու պաշտոնդ Հուդայի և Պիղատոսի միաժամանակ... Եղավ գիշեր, եղավ հոշոտված ժամանակ, եղավ քառս, որու համար պատասխան տվեց Անմեղությունը... Դուն անոնցեն չէի՞ր, որ աշխարհը վերածեցին քառսի: Դուն պարզապես անոնց մանկլավիկն ու պնակալեզն էիր, որ թուրքերու ստոր բնազդներեն հոշոտվող ժողովրդին ստեցիր Աստծո անունով:

ԱՌԱՋԻՆ ԱՅՑԵԼՈՒ - Պատերազմ էր:

ՄԱՐԻԱ - Ոչ: Դեռ պատերազմ չէր: Դեռ Սուլթան Համիդն էր: Արյունոտ Համիդ և իմաստուն, բարի, աշխատասեր ժողովուրդ մը: Ի՜նչ չափերի է հասած հայերու հալածանքները օսմանյան կայսրության մեջ: Սակայն այդ քիչ կարծելով Աբդուլ Համիդը որոշեց ընդհանրապես վերացնել հայ ազգը աշխարհեն: Ձինված խաժամուժ ամբոխ, ոստիկանություն, քրդեր, սուլթանի համիդիեական հեծյալ զորամասեր ի սպաս դրվեցան այդ արյունոտ գաղափարը ի կատար ածելուն... Անոնք կհարձակվեին անզեն, անպաշտպան հայերու վրա... Կանոնավոր բանակը միշտ կարգ կպահպաներ, որ «աշխատանքը» առաջ երթար անշեղորեն և կմիջամտեր, երբ հայերը կփորձեին պաշտ-

պանվիլ իրենց թաղամասերու մեջ... Հայերու արյունը կհոսեր գետի մը պես, իսկ դուն՝ գերմանացի միսիոներ, քահանա խորհրդատու թուրքերու ոճիրներու...

ԱՌԱՋԻՆ ԱՅՑԵԼՈՒ - Ես կհասկնամ անոր...

ՄԱՐԻԱ - Ու՞մ:

ԱՌԱՋԻՆ ԱՅՑԵԼՈՒ - Սուլթան Համիդը:

ՄԱՐԻԱ - *(Կարկամած)* Դուն կհասկանաս սուլթա՞նը:

ԱՌԱՋԻՆ ԱՅՑԵԼՈՒ - Ինչպես ամեն ճշմարիտ տիրակալ, ան նույնպես պիտի մտածեր ապահովելու իր գահին անսասանությունը կայսրության իսլամացումով և Թուրքիոյ քաղաքական տիրապետության շրջանակները մեծցնելով: Բայց հայտնի փաստ է, որ թուրքերը կայսրության մեջ փոքրամասնություն կկազմեին, ողջ ազգաբնակչության մեկ երրորդը, մնացածը հայեր, հույներ, քրդեր, արաբներ, սիրիացիներ էին: Պետք է շարք մը ազգեր բնաջնջվեին, որպեսզի ապահովվեր թուրքերու մեծամասնությունը: Եվ երբ 1878 թվականին Բեռլինի վեհաժողովեն ետքը Հայկական հարցը միջազգային ասպարեզ ելավ, այս պարագան պետք է որ անհանգստացներ օսմանյան կառավարող շրջանը... Այդ ընթացքին էր, որ օսմանյան կայսրության մեծ վեզիր Քյամիլ փաշան ըսավ... «Հայ ազգը վերացնելու, անհետ ընելու ենք: Եվ այդ ի գլուխ հանելու համար կրոնական պատերազմ մը կընսկսինք:՝ Դյուրին պատերազմ ազգի մը դեմ, որ ոչ զենք ունի, ոչ զինվորություն և ոչ ալ պաշտոն, երբ ընդհակառակը՝ մենք զենք ալ ունինք, զինվորություն ալ, պաշտպան ալ... Եվ, եթե հայ ազգը բնաջինջ ըլլա և քրիստոնյա Եվրոպան կրոնակից մը փնտրե Ասիո մեջ, մեր աշխարհին մեջ, չպիտի կրնանա գտնիլ և կթողու մեզ հանգիստ...»: Իմ կարծիքովս, Օսմանյան կայսրությունը ազգային հարցին լուծում տալու համար ընդունեց ավելորդ ազգերուն ոչնչացնելու հաջողակ գաղափարը:

ՄԱՐԻԱ - *(Ապշահար)* Մարդ, դուն քահանա ես, կես միլիոն հայ ոչնչացվեցավ համիդյան կոտորածներու ժամանակ, դուն ինչպե՞ս կրնաս այդքան նողկալի դատել աշխարհի մեծագույն ոճրագործության մը մասին... Հայ ժողովրդին մարտիրոսության մասին... Դուն մտար տառապող ժողովրդի մեջ Աստծո հավատի քո քարոզներովդ, որ հետո անոր ծախես Հուդային արծաթով... Դուն, քրիստոնյա ըլլալով, ծախվեցար Մուհամեդի արյունոտ գաղափարին հանուն արծաթի՞,

թե հանուն գաղափարի... *(Աղաղակում է)* Հանուն ինչի՞, էհմա՛ն, Հուդա՛:

ԱՌԱՋԻՆ ԱՅՑԵԼՈՒ - *(Սառը)* Կչափազանցնես:

ՄԱՐԻԱ - Ոչ: Հիմա, իրավ, գիտակցությանս մեջ արյունոտ Համիդի պատկերն է... Սակայն իրմե հետո եկածներու մոտ ան, ի վերջո, ամենաարյունարբուն չէր... Ան ոճրագործության նողկալի ուսուցիչն էր բոլոր անոնց, ովքեր վերջը անոր պիտի գերազանցեին... Ոճրագործության սոսկալի գահը երբեք թափուր մնացած չէ, թափուր չէ նաև անոնց տեղը, ովքեր խիղճը ծախելով սատանային, կծառայեն այդ գահին...

ԱՌԱՋԻՆ ԱՅՑԵԼՈՒ - *(Ծիծաղում է):*

ՄԱՐԻԱ - Ո՞րն է ուրախությանդ պատճառը...

ԱՌԱՋԻՆ ԱՅՑԵԼՈՒ - Մենք կապրինք քսաներորդ դարը, հպարտ ու առնական դարը...

ՄԱՐԻԱ - Հպա՞րտ...

ԱՌԱՋԻՆ ԱՅՑԵԼՈՒ - Այո, որովհետև մարդկությունը իր վրայեն նետեց կաշկանդվածության ծանր շղթաները, ձերբազատեց իր ազատությունը:

ՄԱՐԻԱ - *(Ապշած)* Դուն բան մը անշուշտ կխառնես...

ԱՌԱՋԻՆ ԱՅՑԵԼՈՒ - Ոչ: Առաջին աշխարհամարտ... Երկու հզոր խմբավորումներ: Անոնք կփորձեին ջախջախել մեկ-մեկու, որպեսզի բորենիներու նման արյունոտ պատառներ խլեն... Հոշոտելու կիրք, ահարկու վայրագություններ, որոնք կարդարացվին իրավունքի և գաղափարի կռիվ անունով... *(Ոգևորված):* Ատիկա առնական կռիվ մ'էր, ուր պիտի հաղթեր Աստծո ընտրյալ ցեղը...

ՄԱՐԻԱ - Ի՞նչ կբարբաջես... Դադարե... Ի՞նչ ընտրյալ ցեղ...

ԱՌԱՋԻՆ ԱՅՑԵԼՈՒ - Խոստովանե... թուրքերու պանթյուրքիզմի և պանթուրանիզմի գաղափարը՝ տիրել Միջերկրական ծովեն մինչև արևելքի անսահմանությունները, մեծ գաղափար մ'էր...

ՄԱՐԻԱ - *(Զայրույթով)* Լռե՛, քահանա, լռե... Թուրքիո ոճիրը հայերու դեմ չէր մինակ, Թուրքիո ոճիրը մարդկության քաղաքակրթության դեմ էր առհասարակ... Հեռացի՛ր...

ԱՌԱՋԻՆ ԱՅՑԵԼՈՒ - *(Քմծիծաղով)* Ես կհեռանամ... Սակայն կուզեմ հարցում մը ընել՝ ինչու՞ խիղճդ անհանգիստ է:

ՄԱՐԻԱ - Խի՞ղճս...

ԱՌԱՋԻՆ ԱՅՑԵԼՈՒ - Ատորեն չէ՞, արդյոք, անքնության նոպաներդ... Միշտ ծառայած ես բարուն... Ինչպե՞ս է, որ ես չարին եմ ծառայած և չունիմ անքնություն ու դուն ունիս... Տասնհինգ տարեկան էիր, չէ՞, որ կարդացիր անգլիացի ճանապարհորդ և լրագրող Էմիլ Դիլոնի հոդվածները Հայաստանին մասին, անոր տառապանքներու մասին և ժաննա դը Արկի պես ներշնչում մը ունեցար: Հայ ժողովրդին օգնության փութալը՝ մարդկային պարտականություն է: Փութացիր՝ օգնեցի՞ր... Վաստակեցար միայն այս անքնությունը...

ՄԱՐԻԱ - Ես գթության քույր դարձա և եկա ծառայելու Հայաստանին, իմ խղճիս թելադրանքովը... Ինձի պատեհություն էր տրված մխիթարել թշվառ մարդկանց Համիդին ջարդերեն վերջը... Խնամել որբ մանուկները, որոնք արժանի էին կարեկցանքի... Եթե հայերու ողբերգությունը ավարտվեր Համիդին տապալումով, ես կրնայի վերադառնալ հայրենիքս՝ Դանեմարքա... Սակայն արյունոտ սուլթանին եկան փոխարինելու երիտթուրքերը... Երիտ-թուր-քերը... Որչա՜փ ցնծությամբ ընդունեցին հայերը արյունոտ սուլթանի տապալումը և որչափ ռգևորությամբ՝ երիտթուրքերը... Հայու հավերժական պատրանքներ, որ Կիլիկյան սև գիշերովը, Ադանայի կոտորածովը ի չիք դարձավ... Այդ գիշեր Հայոց հոգևոր և մարմնավոր առաջնորդները Ստամբուլի պալատը երիտթուրքերու պարագլուխներու հետ անտեղյակորեն օշարակ կընպեին և մեծ հավատարմության երդումներ կուտային-կընդունեին՝ չիմանալով սակայն, որ այդ միջոցին Ադանան... կհոշոտվի... Առավոտյան երեսուն հազար հայեր արևին հայացքին առջև հայտնվեցան բզկտված, բռնաբարված իրենց մահովը... Կիլիկյան սև գիշեր... 1909 թվական... Երիտթուրքերու կազմակերպած Մեծ Եղեռնի սկիզբը... Հանուր մարդկության խղճի Մեծ Եղեռնը...

Հայտնվում է պատառոտուն փարաջայով ԵՐԿՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒՆ, որի պարանոցին փողկապի նման պարան է կապված: Նրա կծկված մարմինը, դեմքի ահաբեկված արտահայտությունը, հայացքում խտացված ողջ սարսափը, խոսում են նրա անհավասարակշիռ վիճակի մասին: Սա պատվելի քահանա Ամիրխանյանն է: Նրան տեսնելով ԱՌԱՋԻՆ ԱՅՑԵԼՈՒՆ հեռանում է մի կողմ:

ԵՐԿՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Գոհաբանության օր է... Պաշտամունք ունիմ, աղոթեցեք... Ծնկաչոք աղոթեցեք... Շնորհակալ եղեք այս չարչարանքներու համար... Տերը սիրելով է, որ կչարչարե... կխաչե... Խաչե և

ինձ... Ետին քահանա հերկողիս Հող... Սերմնացանները պառկեցան հողին... Շներն ու գայլերը հագեցան, որովհետև, երբ հերկեցին սերմնացանները հողի երես դուրս եկան... Իմ կառքս, ահա, ճամփաներեն և դաշտերեն կանցնի... Դիակներու վրայով կանցնի... Տեր... Տեր... Սիրելո՞վ է, որ սերմնացանները սերմ դարձուցիր և առատությամբ նետեցիր երկրին վրա... Գոհանամ քեզնով, Տեր, որ չնչին քահանայիս խաչը քո խաչին հավասարցուցիր...

ՄԱՐԻԱ - Լռե...

ԵՐԿՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Մի մերժե գոհաբանության աղոթքս...

ՄԱՐԻԱ - Լռե...

ԵՐԿՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Տերը պիտի ներե զղջացողները...

ՄԱՐԻԱ - Տերը՝ այո, քո ժողովուրդը՝ ոչ...

ՄԱՐԴՆ հանկարծ անկյունում տեսնում է ԱՌԱՋԻՆ ԱՅՑԵԼՈՒԻՆ:

ԵՐԿՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - *(Սիաբեկված)* Ա՞ն է... Ան է: Թուրք գավառապետը անոր նստեցուց իր աջ կողմը...

ՄԱՐԻԱ - Քեզ ալ ծախ կողմը... Եվ օշարակը, որ հյուրասիրեց՝ բերված էր Ստամբուլեն... Հատուկ էր, ընտրյալներու համար էր...

ԵՐԿՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Ընտրյալներու... Կըմպեինք օշարակ... Անչափ քաղցր... Անոր հետ կըմպեինք գավառապետ վալիի խոսքերուն թույնը... Ես՝ քահանա Ամիրխանյանս, դանդաղորեն կընկղմեի ահաբեկումի անծայր խորքերը, որտեղ սարսափահար ծվարել էին իմ բոլոր զգացմունքներս... Բոլոր մտածումներս... Իսկ ասիկա կժպտար... Տես, հիմա ալ կժպտա... Ես տեսա անոր ժպիտը և հավատացի վալիին... Վալին ըսավ. «Թող հայերդ ցույց տան իրենց զենքերու տեղը... Թող բերեն հանձնեն... որ ապահով ապրին թուրքերու հովանավորության տակ...», հովանավորության... Այդպես ըսավ... Ասիկա հաստատեց... ժպտաց... հաստատեց... *(Արագ մոտենալով կնոջը):* Ըսավ, քարոզե, ըսավ, մտիր եկեղեցի քարոզե, կապրին... Թող բերեն զենքերը՝ կապրին... Թե չէ արյունը եփրատի նման կհոսի... Եփրատի... Ես օշարակ չէի խմե, կին, արյուն կխմեի... գոլ... կպչուն... Իմ ներսս կարմիր օշարակ... արյուն *(Լայն բացելով բերանը)* Նայե... խորքը նայե... *(Աղաղակում է)* Տեսա՞ր... կպչուն... կարմիր...

ՄԱՐԻԱ - *(Արագ հեռանալով նրանից)* Հավատի տաճարը դարձուցիք պղծության վայր, եկեղեցու բեմը՝ ասպարեզ ստի, Սրբազան քարոզը՝ քաղաքականության...

ԵՐԿՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Ան ինձի ըսավ՝ կապրին...

ՄԱՐԻԱ - Անոնք իրենց ընտանիքներու կյանքը փրկելու համար հավատացին երկուսիդ քարոզներուն... Պերճախոս քարոզներուդ...

ԱՌԱՋԻՆ ԱՅՑԵԼՈՒ - Պատերազմ էր: Կառավարությանը թշնամի տրամադրված տարրը իրավունք չունի զենք ունենալու...

ՄԱՐԻԱ - *(Զայրանալով)* Կսխալիս:

ԱՌԱՋԻՆ ԱՅՑԵԼՈՒ - Պատերազմ չէ՞ր...

ՄԱՐԻԱ - Խոսքն ատոր մասին չէ... Թուրքերն էին թշնամի տրամադրված հայերուն... Անոնց թշնամությունը կատաղի մոլուցքի մը կհասնիր...

ԵՐԿՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Մոլուցքի... կատաղի... Անոնք ծեծեցին ինձի մոլեգնորեն... Կըսեին՝ քարոզե... համոզե... էլի մարդիկ կան... զենք ունին... Չկային... Անոնք ինձի խեղդեցին ու չխեղդեցին... *(Արագ)* Գոհաբանության օր էր... չարչարանքի... Խարբերդի Կարմիր ղոնախ բանտը լեցուն-լեցուն մեզանով... Դեղագործ Թորոսը... Պրոֆեսոր Որբերյանը... մյուս... մյուսները... վազեցուցին... վազեցուցին... վազեցուցին... ոտքերեն արյուն հոսեց... Կռնակի վրա պառկեցուցին, վրաները նստեցան... Գլուխները զարնեցան... զարնեցան...

ԱՌԱՋԻՆ ԱՅՑԵԼՈՒ - Պատերազմ էր...

ԵՐԿՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Գոհաբանության օր է, երթամ...

ՄԱՐԻԱ - *(Մեղմ)* Կեցիր... Դեղագործ Թորոսը ինչպե՞ս մեռավ...

ԵՐԿՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Սուտ է... Անոր անունը ես չտվի... Ան էր...

ԱՌԱՋԻՆ ԱՅՑԵԼՈՒ - Պատերազմ էր:

ՄԱՐԻԱ - Ինչպե՞ս մեռավ դեղագործ Թորոսը:

ԵՐԿՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Խաչեցին... Խաչին փայտը ես հանեցի Գողգոթա... Գոհանամ քեզանով... Տեր... Մյուռոնի լեցուն սկիհը լցվեցավ տաք, գոլ օշարակով... դատարկվեցավ... Թափվեցավ, թափվեցավ... Աշխարհը ծածկվեցավ կարմիր մուժով... Սերմնացանները ցանվեցան հողին... որպես սերմ... Երթամ միանամ... Երբ կանչես, կուգամ...

ՄԱՐԻԱ - *(Ծունր է իջնում)* Աստված պիտի ներե զղջացողները...

ԵՐԿՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Աստված՝ գուցե... Իմ ժողովուրդս՝ ոչ... Իմ ժողովուրդս... Երթամ միանամ... *(Ձեռքը տալիս է կնոջը, բարձրացնում)* Երբ կանչես՝ կուգամ...

ՄԱՐԻԱ - Մի գա...

ԵՐԿՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Կուգամ... Հարության օրը... որ հաշտվին ինձի հետ... որ հաշտվիս...

Հեռանում է: Բայց ինչ-որ բան հիշելով ձեռքը տանում է փարա-

ջայի ներսի գրպանները և հանելով մի հնամենի գիրք՝ իր նման պատառոտուն և տանջահար՝ մեկնում է ՄԱՐԻԱՅԻՆ:

ԵՐԿՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Պահե... Աշխարհիս մեջ թե կգտնաս հայ մը ողջ մնացած, տուր անոր, ասիկա անոր ժառանգությունն է: Այս մագաղաթին էջերուն մեջ մեծ գիտություն մը կա պահված, որուն եվրոպացիներդ հասնու պիտի ըլլայիք ասորեն յոթ դար անցնելէ վերջը... Ասիկա լուսավոր ժողովրդի հոգևոր գանձ մըն է, որ կկտակե իր ժառանգներուն...

ԵՐԿՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒՆ հեռանում է, ՄԱՐԻԱՆ երկար, կարծես չտեսնող հայացքով նայում է ափերի մեջ հանգրվանած գրքին:

ՄԱՐԻԱ - Ի՜նչ տեսակ երկիր, ինչ ժողովուրդ և ինչ դժբախտություն... Ո՞րքան կուզեմ օգնել, պաշտպանել հայերը, որ տառապանքի ու չարչարանքի մարմնացումն են... Բոլոր հայերու զենքերն հավաքել են... Հայերը սարսափով ջարդի կսպասեն... Անոնք անսահման դժբախտ են... Թուրքերը ինչ կուզեն, կընեն... Հայերը անշուշտ ոչ մեկ հանցանք չեն գործել... Սակայն այս երկրին մեջ միայն անարդարություն և անօրենություն կտիրե...

ՊՆԾԱՆՈԹ ՁԱՅՆ - Մարիա... Եկ տուն, Մարիա... Քո սիրտը հոգնել է տառապանքների հիշողությունից... Բաց են դռները հավերժական քո օթևանի... Մարիա...

ՄԱՐԻԱՆ ցնցված այդ ձայնից ամբողջությամբ լսողություն դարձած քարացել է... Ձայնի արձագանքները հեռանում, կորչում են, և ԿԻՆԸ վերջապես կարողանում է վերագտնել խոսելու ունակությունը:

ՄԱՐԻԱ - Սպասե, կուգամ... Շուտով... Բայց դեռ թող գան ու երթան այցելուները... Անոնք իմ մտքիս ու էությանս խորշերեն դուրս կսողոսկեն, որ հիշողությանս դատապարտեն հին տառապանքի մղձավանջներին... Սպասե, կուգամ... Դուն ո՞վ ես... թերևս իմ հոգնած եսին արձագանքն ես դուն... Իմ հոգնած եսին... *(Թակոց)* Կլսեմ նորեն կթակեն... Նորեն...

Նա նստել է իր անկյունում մթության մեջ: Թույլ լուսավորված է միայն տառապանքի դիմակի մեջ անշարժացած դեմքը...

V

ՏԵՍԱՐԱՆ ԴԱՐՊԱՍԻ ՄՈՏ

ԵՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒՆ թակում է դարպասը վրա-վրա, անհամբեր:

ՊԱՀԱԿ - Ո՞վ է:

ԵՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Ճանապարհորդ:

ՊԱՀԱԿ - Ասիկա հյուրատուն չէ...

ԵՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - «Թռչնոց բույնն» է, հայ վերապրող մանուկների տունը:

ՊԱՀԱԿ - Այո: Սակայն ինչու՞ կզարնես «Թռչնոց բույնի» դուռը:

ԵՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Տիրուհին՝ Դանեմարքայի Մարիա Յակոբսոն:

ՊԱՀԱԿ - Այո...

ԵՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Ծնած Դանեմարքայի՝ Հորս քաղաքի մեջ 1887 թվականին...

ՊԱՀԱԿ - Այո...

ԵՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - 1907 թվականին Հայոց Խարբերդ քաղաքին Դանեմարքայի միսիոներական ընկերության գթության քույր...

ՊԱՀԱԿ - Ինչպե՞ս իմացար...

ԵՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - 1915 թվականի եղերական դեպքերեն մազապուրծ վերապրող երեխաներին շատերի մայր Մարիա Յակոբսոնը...

ՊԱՀԱԿ - Այո, պարոն, այո... Մարիա Յակոբսոնը...

ԵՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Հայտնեցեք անոր, որ եկել է... ոչ, ոչինչ մի ըսե, ուղղակի առաջնորդե անոր մոտ ինձի...

ՊԱՀԱԿ - Զգույշ, «Թռչնոց բույնը» քնած է...

ԵՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Այնտեղ՝ անկյունի պատուհաններեն մեկուն մեջ լույս կա...

ՊԱՀԱԿ - Անոր անքնությունը կտանջե...

ԵՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Գիտեմ:

VI

ՏԵՍԱՐԱՆ ԴԱՏԱՐԿ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Պայծառ լուսավորվում է կիսախավար միջավայրը, և ՄԱՐԻԱ ՅԱԿՈԲՍՈՆԸ առանց շրջվելու զգում է ԵՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒԻ ներկայությունը:

ՄԱՐԻԱ - Ներե... Ես չկրցա փրկել քեզի...

ԵՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - 1915 թվականն էր...

ՄԱՐԻԱ - Այո... Այո...

ԵՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Պարոն Ռիկզին հետ դուն ջանացիր... շատ ջանացիր, որ ինձի դուրս կորզես Կարմիր ղոնախ բանտեն, բայց ո՞վ կրնար դուրս կորզել որևէ հայի Կարմիր ղոնախեն...

ՄԱՐԻԱ - Մենք կպատճառաբանեինք, թե դուն դեղագործ ես... որ դեղագործությունը անչափ անհրաժեշտ մասնագիտություն մէ, մանավանդ, երբ պատերազմ է... Կարելի չէ Խարբերդ քաղաքը զրկել

միակ դեղագործեն... Բայց դուն հայ էիր...

ԵՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Ես հայ էի: *(Դադար)* Ու՞ր է Զարուհին...

ՄԱՐԻԱ - *(Լուռ է):*

ԵՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - *(Անհամբեր)* Ի՞նչ պատահեցավ անոր, երբ ինձ գնդակահարեցին բանտին մեջ:

ՄԱՐԻԱՆ դանդաղ շրջվում է դեպի ԵՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒՆ և հայացքը երկար հառում նրան...

ԵՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Օրիորդ Յակոբսոն...

ՄԱՐԻԱ - Այն ատեն ես քսանութ տարեկան էի, ինչպես դուն... Հիմա ես ծեր եմ... Դուն նորեն քսանութ տարեկան ես... Դուն հավերժական երիտասարդ մըն ես, ինչպես Զարուհին...

ԵՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Ան հանձնված էր քու խնամքիդ...

ՄԱՐԻԱ - Ես չկրցա փրկել անոր... 1915 թվականն էր...

Լռություն է: Լռության մեջ ծնվող ողբերգական երաժշտությունը իրար դիմաց լուռ կանգնած երկուսի տառապանքի աղաղակն է, իսկ հետո խոսում է կինը, կարծես արդարանալու կամ համոզվելու կատարվածի համար, իր տառապանքը ծգվում է ապրած ողջ ժամանակի մեջ և դրանից փրկություն չկա:

ՄԱՐԻԱ - Կառավարությունը զենք գտավ տուներդ... Դուն մեղավոր դիտվեցար անոր օրենքներուն առջև: Դուն ձերբակալվեցար և քեզի հետ նաև շատ մը ուրիշներ... Անչափ կցավիմ, որ այդչափ տառապեցար անխոհեմ վարմունքիդ պատճառով...

ԵՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Անխոհե՞մ, ըսիր... Սակայն ինչպե՞ս կրնաս անխոհեմ անվանիլ անոնց, որոնք զենք են պահել իրենց տուներուն մեջ՝ ընտանիքին կյանքն ու պատիվը պաշտպանելու համար: Արդյոք մայրերու կուրծքին փարած մանուկները նու՞յնպես զենք կպահեին և մեղավո՞ր էին թուրքերու օրենքներու առջև... որ մորթվեցան: Սուլթան Համիդի կոտորածներեն, երիտթուրքերու Ադանայի կոտորածներեն բան մը չպիտի՞ սորվեինք... Կհիշե՞ս, Ադանայի կոտորածեն հետո կառավարությունը Ստամբուլեն դիմեց հայերուս, ըսելով, թե պիտի այլևս պաշտպանեն հայերը ֆանատիկոսներեն, որոնք մուսուլման կրոնին սիրուն են ջարդել քրիստոնյա հայերը... Կհիշե՞ս, մենք ալ հավատացինք: Արդեն հայերս այդպես ենք, մեզի կխաբեն, ու մենք կհավատանք, մեզի պաշտպանող զենքը կդնենք թշնամուն ոտքին տակ: Կառավարությունն ալ ապահով ըլլալով, որ այլևս զենք չկա հային ձեռքը՝ խոսքը կդրժե ու նորեն մեզի կջարդե, կջարդե... Ուրեմն, հայերը իրավունք չունին հոգ տանիլ անձնապաշտ-

պանության համար... Ազգին բնաջնջման խնդրին առջև չպետք է պայքար մղինք: Կհասկնա՞ս, Թուրքիո նման բարբարոս տերություններեն մարդկային իրավունքներ պահանջելու ուրիշ ճանապարհ մը չկա, բացի զենքը ձեռքին կռվիլը...

ՄԱՐԻԱ - Սակայն դուք հեղափոխական կդիտվիք:

ԵՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Հեղափոխական կսես՝ չհասկնալով, թե ատիկա ինքնապաշտպանության զգացմունքին արթնացում է...

ՄԱՐԻԱ - Սակայն միշտ պարտվող կողմը նորեն հայերը կըլլան ու նորեն հայերուն արյունը կհոսի...

ԵՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Զենքը ձեռքին հայը կզոհվի՝ չի մորթվի: Ատ երկուսին տարբերությունը չե՞ս տեսներ: Ատ երկուսին միջև տարբերությունը մեծ է:

ՄԱՐԻԱ - Հայերը հեղափոխական գաղափարները դուրսե՞ն կառնին, ռուսներե՞ն...

ԵՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Ատիկա սխալ է... Անոնցն ուրիշ է, մերն ուրիշ... Մերը անձնական կյանքեն իսպառ հրաժարած, տնեն, հարազատներեն հեռացած, լեռներուն եղբայրացած, ազգին ազատագրումին գաղափարը միմիայն փայփայած հայդուկներ են... Անոնք առանց բանակ զինյալներ են... Անոնք նվիրյալներ են, անոնք նահատակներ են... Պետք չէ, որ դուն հավատաս ադ բարբաջանքները, թե ռուսներու հանդեպ հայերու սերն է, որ կգրգռե թուրքերը... Պարզապես, ռուսը քրիստոնյա է, և հայը կհավատա, թե անոր հետ տառապանքները քիչ մը տանելի պիտի ըլլան... Սակայն ռուսը ռուսին հետ հակասություն ունի, անոր համար էլ հեղափոխական կըլլա... Մերն ատ չէ, մեր պայքարը թուրքերու հայաջինջ քաղաքականության դեմ է... Կհասկընա՞ս տարբերությունը... Ի՞նչ ըրին ռուսները առաջին աշխարհամարտին... Հասան Վան, Էրզրում, այլուր... Հայերը մխիթարվեցան, թե ահա պիտի գա ռուսը ու փրկե հայը... Սակայն դավաճանվեցան հային սպասումները... Անոնք ետ քաշվեցան՝ հային թողնելով այլևս կատաղության բոլոր սահմաններն անցած թուրքին ճիրաններու մեջ...

ՄԱՐԻԱ - Հայերու կռիվն այլևս անհնար է...

ԵՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Մի ըսեր, թե կռիվը անհնար է կամ անմիտ բան մըն է... Չկա ոչ մեկ զորեղ թշնամի, որի դեմ կռիվն անհնար ըլլա, չկա ոչ մեկ բռնություն կամ անարդարություն, որի դեմ բողոքը անմիտ բան ըլ-

լա... Կռվողը կկռվի ոչ միայնակ, երբ համոզված է, թե անպայման պիտի հաղթե... Ան կկռվի, որովհետև չի կրնա այլևս չկռվիլ... Օրինակ կուզե՞ս... Ուրֆայի, Զեյթունի, Վանի, Սասունի, Գարահիսարի, Մուսա լեռան և մյուս կռիվները: Այդ կռիվներու հիշատակներն են, որ վերապրող հայերու սրտերը խանդաղատանքով կլցնեն իրենց հայրերու և պապերու հանդեպ, երբ կհիշեն եղեռնի անագորույն օրերը... Անոնք զենքը ձեռքին մեռնող քաջեր էին ու հերոսներ: Ապրողները ինչպես կրնային մեկմեկու աչքերու մեջ նայել, եթե չըլլար մեռնողներու քաջությունն ու հերոսությունը... Անոնք թաքուն հպարտությամբ մը միշտ կհիշեն քաջությամբ զոհվածները և թաքուն հույսով մը՝ հայու չմարող հույսովը կպատմեն իրենց զավակներուն անոնց մասին... Այդ քու ըսած անմիտ կռիվն է, որ կապրեցնե Ազգի Ոգին, անկախ այն բանեն, որ կռիվը ապրելու կռիվ չէ, այլ մեռնելու է...

ՄԱՐԻԱ - Քու կռիվդ ալ ապրելու չէր... մեռնելու կռիվ էր... *(Դադար)* Ես չկրցա քեզի փրկել...

ԵՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Մարիա... Մեծ հոգու տեր Մարիա... Գեղեցիկ Մարիա, որն իր գեղեցկությունն ու երիտասարդությունը գոհեց Հայոց տառապանքի սեղանին... Ես կհիշեմ, թե դուն ինչպես, երբ Կարմիր ղոնախ բանտին մեջ հիվընդցա, կրցար համոզել գավառապետը, որ հիվանդանոց տեղափոխեն ինձի... Մարիա, քու խնամքդ ամեն գովեստեն վեր էր... Գիտես, կարծես հիմա ալ կզգամ քու ձեռքին զովը իմ վառվող ճակատիս... Քու ձեռքին զովը...

ՄԱՐԻԱ - *(Համառորեն)* Ես չկրցա փրկել քեզի...

ԵՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Ատիկա անհնար էր... Դուն Զարուհիին մասին լուր տուր... Զարուհիին... *(Դադար):*

ՄԱՐԻԱ - Դուն կճանչնա՞ս Գորշ գայլերը...

ԵՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Անշուշտ կճանչնամ... Էնվեր արնախումին ստեղծած Գորշ գայլերու միությունն է ատիկա, ուր մինչ Իթթիհադ միության անդամ ըլլալը, կկոփվին թուրք երիտասարդներեն ընտրյալները, ամենեն վայրագները... Անոնք կապրին անգո երկրի մը մտապատկերին զառանցանքն բուռ գանգերուն մեջ... Լսած չունի՞ս անոնց ոռնոցը... «Ելեք Գորշ գայլեր և փշրեք մեծ Թուրան տանող ճանապարհին ընկած ամեն խոչընդոտ: Դուք սերուցքն եք բացառիկ ազգի՝ առաջնորդեք...»: Սակայն ինչու՞ դուն կհետաքրքրվիս Գորշ գայլերով և չես խոսե Զարուհու մասին: Ինչու՞ շատ մը բառերուն մեջ կուզես

թաքնվիլ...

ՄԱՐԻԱ - Թաքնվի՞լ...

ԵՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Թաքնվիլ, ծածկվիլ, խուսափիլ:

ՄԱՐԻԱ - Ինչե՞ն...

ԵՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Պատասխանեն... Խղճի պատասխանեն... Զարուհին քու խնամքիդ էր թողնված... Դուն շատերուն փրկեցիր... Ինչու՞ չկրցար անոր փրկիլ...

ՄԱՐԻԱ - (*Ծանր դադարից հետո)* Սպան, որ կուզեր Զարուհին տանել, Գորշ գայլերու Խարբերդի մասնաճյուղի հրամանատարն էր... Օրը քանի մը անգամ ասկյարներով կուգար, կգարներ մեր դուռը և կպահանջեր, որ իրեն տանք Զարուհին, հակառակ պարագային, կսպառնար քարուքանդ ընել Դանիայի միսիոներներուն որջը, ինչպես կարտահայտվիր անիկա... Սակայն Զարուհուն թաքստոցը հուսալի էր... *(Լռում է):*

ԵՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Խոսե...

ՄԱՐԻԱ - Գաղտնիք է, թե թուրքերը ինչպես կրցան հայտնաբերել Զարուհու թաքստոցին տեղը... Սպան անոր կհանե ապաստարան նկուղեն և կհանձնե թրքուհիներուն, որ աղջկան բաղնիք տանին, լողացնեն, թուրք հարուստ կնոջ նման զարդարեն և իր տունը բերեն... Որպեսզի աղջիկը նորեն չփախչի իր ձեռքեն, ան բաղնիքը կշրջապատե Գորշ գայլերու մեծ խումբով մը... Լուրն ինձ հասավ այն ատեն, երբ Զարուհին դեռ բաղնիքն էր...

Հեռվից դանդաղորեն ծավալվում է եկեղեցու մի հատիկ զանգի զանգահարությունը: Մարիան և Թորոսը ընկղմվում են կիսախավարի մեջ... Հեռվում՝ առանձին, ճերմակազգեստ հայտնվում է ԶԱՐՈՒՀԻՆ:

ԶԱՐՈՒՀԻ - Ան հայտնվեցավ բաղնիքին մեջ նժույգին վրա նստած... և գոլորշու ամպի մեջեն երևաց որպես տեսիլք, վրիժառու հրեշտակ... Թրքուհիներն այդ տեսիլքեն սարսափահար ահավոր աղաղակ մը բարձրացնելով ընկրկեցան... Մերկ մարմիններու ու խիտ գոլորշու մեջեն ան ինձի չկրցավ տեսնիլ... և կանչեց. «Զարուհի»: Ես նետվեցա անոր կողմը... Թրքուհիներն սթափվեցան իրենց սարսափեն, հասկցան, որ ան եկել է ինձի փրկելու... Անոնցմե շատերը կճանչնային օրիորդ Մարիա Յակոբսոնը, որովհետև ան Խարբերդին մեջ հայտնի էր գթության քրոջ իր դարմանումներովն և օգտակար եղած էր շատ մը թրքուհիները... Անոնք նեղ օղակով մը շրջապատեցին ին-

ծի և քիչ մը ալ՝ պիտի խեղդեին... Այն ատեն օրիորդ Յակոբսոնը սկսավ մտրակիլ թրքուհիները... Դուն հասկցիր, անիկա անսահման բարի սիրտ մը ունի... Քրիստոսի անոր հավատը կբացառե չարին չարությամբ պատասխանիլ... Ան իմ պատճառովս մեղքին տակ ընկավ... Ես դուրս նետվեցա կատաղած կանանց ձեռքեն, ընկա նժույգին մեջքին... Ան ինձ վրա նետեց իր թիկնոցը, դուրս սլացավ բաղնիքեն, հիմա ալ ճանապարհ բացելով ապշահար եղած ասկյարներու միջեն... *(Մեղմ ժպիտով)* Հոգիս, երբևէ լսե՞լ ես, որ որևէ մեկը նժույգով բաղնիք մտնա... Այնքան անսպասելի ու արագ կատարվեցավ, որ դուռն հսկող թուրքերը չկրցան արգելել... Իսկ երբ կիեռանայինք, սարսափահար գոչումով մը երեսիվար կփռվին հողին... Ան ինձի փրկել է, հոգիս... Ան ինձի փրկել է...

Լույսը դանդաղ մեղմանում է ու հանգչում: Զարուհին անհետանում է խավարում: Համապատասխանաբար լուսավորվում են ՄԱՐԻԱ ՅԱԿՈԲՍՈՆԸ և ԵՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒՆ:

ՄԱՐԻԱ - Գիտես, ակնթարթներ կան, որոնք իրենցմով կլցնեն հավիտենությունը: Ես քրիստոնյա եմ, իմ հավատը իմ ուժս է, իմ ապավենս, և անիկա ինձ կթելադրե հավիտենության գաղափարը... Սակայն դուն կրնա՞ս պատկերացնել, թե ակնթարթները երբեմն կրնան իրենցմով լցնել կյանքիդ ողջ ժամանակը, Թորոս, բարեկամս, իմ սիրելի տղաս... Իմ հավիտենությունը լցված է ահա Հայոց մեջ ապրած քանի մը ակնթարթներով... Այդ ակնթարթներեն մեկումը մասին հիմա պիտի պատմեմ... Դանիական միսիոներական կազմակերպությունը, դուն գիտես, Խարբերդեն բացի իր մասնաճյուղն ունիր նաև Մեզրե... Մեզրեն շատ հեռու չէ Խարբերդեն, Զարուհուն բաղնիքեն հանելե հետո Մեզրեի մեր մասնաճյուղին մեջ կթաքցնեինք ուրիշ քսան մատաղահաս օրիորդներու հետ, որոնց մեզ հաջողվել էր դուրս կորզել դեպի անապատները քշվող քարավաններեն: Մեզրեի մասնաճյուղին տնօրենը մեծ սրտի և հոգու տեր, իմ ամենեն մտերիմս Մարիա Քարեն էր... *(Լռում է)*: Թուրք գավառապետին մոտ ծառայող արաբ մը կար, որ խուլ ու համր ձևանալով հաջողել էր ստանալ ամենասև աշխատանք մը... Ան երբեմն կտոր մը հացի և ման մը կերակուրի սիրուն կհայտներ մեզի թուրքերու անցուդարձին մասին... Անոր միջոցով իմացանք, որ թուրքերը հանկարծակի ներխուժում մը կպատրաստեն Մեզրեի միսիոներական շենքերեն ներս, քանի որ կկասկածեին, թե հոն հայեր կթաքցնեինք... Զարուհուն և մյուս

օրիորդներուն մենք արագ Խարբերդ տեղափոխեցինք՝ ապավինած թրքուհիներու չադրաներուն...

Նորից երկար ծգվում է ողբերգը՝ մարդկային տառապած հոգիների աղաղակը...

ԵՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Օրիորդ Յակոբսոն...

ՄԱՐԻԱ - Անոնք շրջապատեցին մեր շենքը... Գորշ գայլերը... Անոնք շատ էին... Մեր տնօրեն պարոն Ռիկզը շտապեց գավառապետին մոտ բողոքելու, որ անօրենություն է շրջապատել Դանեմարքայի որբախնամ, աղքատախնամ դարմանատունը, որը կծառայե նաև թուրքերուն, այն պարագային, երբ Դանեմարքան չեզոք է, որևէ պատերազմող խմբի օգնություն ցույց չի տար... Գավառապետը պարոն Ռիկզին չէր ընդունած... Պարոն Ռիկզը հուսահատորեն ջանացել է որևէ արդյունքի հասնել... սակայն իզուր... Երբ ան վերադարձավ, արդեն ամեն բան վերջացած էր...

ԵՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - *(Ճչում է)* Գորշ գայլերը տարան Զարուհուն և մյուսները...

ՄԱՐԻԱ - Ոչ... *(Դադար)* ոչ: Երբ թուրքերը կոտրեցին այն սենյակին դուռը, ուր պատսպարվել էին օրիորդները, անոնք... *(Դադար)* անոնք տեսան... բոլոր քսանմեկը կախված... իրենց գոտիներով... Սենյակին մեջ շատ մը ծանր շրջանակներով նկարներ կային... Անոնք կեռով մը և գոտիով մը ձեռք էին բերել իրենց հավիտենական ազատությունը... և ազատել իրենց սուրբ մարմինները եղծվելեն... Իմ կյանքին դաժան պահերեն մեկը ասիկա է, որն իրմով հայոց մեջ ապրած քանի մը ուրիշ պահերուն հետ լցրել է իմ ժամանակիս տարողությունը...

Մարիան հանկարծ լաց է լինում: Խավարող տեսարանում անհետանում է ԵՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒՆ:

ՄԱՐԻԱ - Պիտի կրկնեմ մարգարեի խոսքերը. «Եթե իմ գլուխը արցունքի աղբյուր ըլլար՝ իմ ժողովրդիս դուստրերուն վրա պիտի լայի...»: Ահա ես նույնպես... Երբեք չպիտի դադարեմ լաց ըլլալուց իմ չարչրկված փոքրիկներու, բռնաբարված ու տանջամահ դուստրերու համար, հանիրավի ապստամբված, խեղված, անդամահատված, ջախջախված, եղկելի, անմարդկային տառապանքների մեջեն մահ գտած իմ որդիներուն վրա... Թորոս... Իմ սիրելի տղաս... Դուք բոլորդ ալ իմ զավակներս էիք... Բոլորդ ալ... ես տեսա, թե դուք ինչպես ձեր խաչին փայտը շալակած կելնեիք Գողգոթա... Ատիկա ահավոր էր...

Լսվում է կանանց ողբի անբառ մեղեդին: Դանդաղորեն տեսարանում հայտնվում են ՃԵՐՄԱԿԱԶԳԵՍՏ ՕՐԻՈՐԴՆԵՐԸ և ՁԱՐՈՒՀԻՆ, ծունր են իջնում: Նրանց բոլորի գլուխներին նշենու կարմիր ծաղիկներից հյուսված պսակներ են: Ողբերգը դանդաղորեն զգացմունքային վերելք է ապրում, որպեսզի վերջում փոխակերպվի աղաղակի: Մտնում է ԵՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒՆ՝ ԹՈՐՈՍԸ, ճերմակազգեստ, գլխին փշե պսակ: Նա սահուն քայլերով մոտենում է Ձարուհուն, ձեռք տալիս, բարձրացնում: Երկու ՃԵՐՄԱԿԱԶԳԵՍՏ ՕՐԻՈՐԴՆԵՐ պսակադրության ծես են կատարում: ՁԱՐՈՒՀԻՆ և ԹՈՐՈՍԸ միմյանց ձեռք բռնած դանդաղ, սահելով մտնում են տեսարանում հայտնված հսկա ԼՈՒՍԵ ԽԱՉԻ մեջ և անհետանում: Նրանց հետևելով ԼՈՒՍԵ ԽԱՉԻ ընդերքում մեկը մյուսի ետևից անհետանում են նաև մյուս ՃԵՐՄԱԿԱԶԳԵՍՏ, նշենու ծաղկած պսակներով ՕՐԻՈՐԴՆԵՐԸ: ՄԱՐԻԱՆ ցնցված տեսիլքից՝ աղաղակում է դեմքով դեպի ԼՈՒՍԵ ԽԱՉԸ:

ՄԱՐԻԱ - Հիսուս, իմ սիրած որդի... Իջիր խաչեդ և աղաղակե՝ Տալիթա Կումի... Կտեսնիս... անոնք անբիծ, անոնք անմեղ, կերթան հավիտենության ճամփով... Իջիր խաչեդ և աղաղակե՝ Տալիթա Կումի... Ինչպես օր մը աղաղակեցիր Հայրոսի մեռած աղջկան ի տես, և ան ոտքի կանգնեցավ ողջությամբ ցնծուն... Տալիթա Կումի... իմ դուստրերուն Տալիթա Կումի...

Նրա հոգում հնչող ողբերգական մեղեդին ծավալվել է, անպարագիծ ցավով դուրս հորդել ու լցվել աշխարհը, որի տակ ՄԱՐԻԱ դանեմարքացի կինը՝ ջարդուփշուր եղած մարմնով և հոգով, կքել է անմխիթար տառապանքով...

Տալիթա Կումի... Ողջ ժողովրդին... Տալիթա Կումի... Հիսուս, իմ սիրած որդի, չե՞ս տեսնե՝ Հայոց տառապանքն այլևս հավերժական է դարձած... Փրկե՞... փրկե՞... ան իմաստուն է՞... ան բարի՞ է... ան կպաշտե քեզի... քեզի համար կխաչվի...

VII
ԹՌՉՆՈՑ ԲՈՒՅՆ

Արագ, գործնական մտնում է ՄԱՐԻԱՆ օրիորդ ԱՇԽԵՆԻ հետ:

ՄԱՐԻԱ - Աշխեն, սիրելիս, դասերեն վերջը, բոլոր սաներուն հայտնե, ճաշեն ետքը Բեյրութ պիտի իջնենք, որ այցելություն մը տանք թոքախտանոցին, անոր բարեգործական արկղին մեջ մեր դրամը պիտի նետենք, ապա կերթանք պտույտի ծովափը... Լողազգեստները թող առնին հետներնին, որ լողնան...

ԱՇԽԵՆ - Այո, մայրիկ...

ՄԱՐԻԱ - Քիչ մը տխուր կերևիս...

ԱՇԽԵՆ - Ոչ, մայրիկ... Կուզեի քեզի հայտնել, Մարիամիկին օժիտը գրեթե պատրաստ է... Սակայն բոլոր վարժուհիներս կուզենք, որ հարսանեկան զգեստը շատ գեղեցիկ ըլլա, շատ զարդաբանված... Մենք կուզենք, որ... Թույլ կուտա՞ս Բեյրութի համրայեն ոսկե և արծաթե թելեր առնինք... Մենք կուզենք մեր քույրը թագուհիի մը պես շքեղ ըլլա... *(Հուզված լռում է):*

ՄԱՐԻԱ - *(Աղջկան սեղմելով գրկում):* Աշխենս, Աշխենս, անշուշտ ան թագուհիի մը պես պիտի ըլլա... Ու դուք ամենքդ ալ... որովհետև դուք անչափ հարուստ եք ձեր սրտի բարությամբ, ձեր ձեռքերի անբավ շնորհքներով... Ահա շուտով դուն ալ պիտի երթաս, որպես հարս, յոթ ծովեն այն կողմ... պիտի երթաս, որպես հարս, ու ես իմ բոլոր հեռավոր հարազատներուս հետ պիտի կարոտնամ նաև քեզի ու անհամբեր պիտի սպասեմ քո նամակներուն ալ...

Արագ ներս է մտնում ՓԱՌԱՆՉԵՄԸ ԴԱՆԻԵԼԻ ձեռքը ամուր բռնած, որը փորձում է դուրս պրծնել: ՄԱՐԻԱՆ հազիվ է զսպում ժպիտը: Գալիս է նաև ՄԱՐԻԱՄԻԿԸ:

ՄԱՐԻԱ - Դու նորեն չարություն ես ըրեր...

ԴԱՆԻԵԼ - Ես իմ արդար վրեժս լուծած եմ...

ՓԱՌԱՆՉԵՄ - *(Զայրացած)* Ան իր արդար վրեժը լուծած է...

ՄԱՐԻԱ - Որու՞ն պատժեցար քո արդար վրեժովդ:

ՓԱՌԱՆՉԵՄ - Հունաստանեն եկած պարոնը:

ՄԱՐԻԱ - Ի՞նչ ըրավ քեզի Հունաստանեն եկած պարոնը, որուն գլխուն թափեցար քո վրեժդ...

ՓԱՌԱՆՉԵՄ - Թող նորեն երթա իր Հունաստանը...

ՄԱՐԻԱ - Իսկ եթե չերթա...

ԴԱՆԻԵԼ - Ես անոր բոլոր վերնաշապիկներու վրա մելան կթափեմ...

ՄԱՐԻԱ - *(Հանգիստ)* Հասկցա: Հունաստանեն եկած երիտասարդ պարոնի վերնաշապիկին վրա մելան թափած ես:

ՓԱՌԱՆՉԵՄ - Ինչու՞ ըրիր...

ԴԱՆԻԵԼ - Չեմ ուզե, որ օրիորդ Մարիամիկին հարս տանե...

ՓԱՌԱՆՉԵՄ - Ինչու՞...

ԴԱՆԻԵԼ - Օրիորդ Մարիամիկին ես պիտի հարս առնիմ:

ՓԱՌԱՆՉԵՄ - Սոր նայե:

ՄԱՐԻԱ - Կեցիր, Փառանձեմ... Այդ մտադրությունն ունեիր, ինչու՞ չեկար և օրիորդ Մարիամիկին ձեռքը չխնդրեցիր ինձմե... Անիկա իմ շատ

սիրելի դուստրս է... Չես տեսնի, աշխարհին ամեն ծայրերեն կուգան իմ սիրելի դուստրերիս ձեռքը ինձմե խնդրելու... Թե դուն ալ ունեիր այդ ցանկությունը՝ ինչու՞ չխնդրեցիր...

ԴԱՆԻԵԼ - Հիմա կխնդրեմ...

ՄԱՐԻԱ - Բայց առաջինը դուն չեղար խնդրողը... Այդ Հունաստանեն եկած երիտասարդը մեղք ունի՞, որ դուն ուշացել ես... Ան արդեն օրիորդ Մարիամիկի ձեռքը խնդրել է, մենք ալ արդեն այո ըսեր ենք... Հիմա ի՞նչ ընենք...

ՄԱՐԻԱ - Մարիամիկ, հոգիս, դուն որոշե, թե քո հարազատդ ով պիտի ըլլա...

ՄԱՐԻԱՄԻԿ - Երկուսն ալ... Դանիելը իմ ամենեն սիրելի փոքրիկ եղբայրս է, իսկ Անուշավանը իմ սիրելի փեսաս է:

ՄԱՐԻԱ - Համաձայն եմ այս որոշումին: Ես կգտնեմ, թե արդար որոշում է... Դուն ի՞նչ կկարծես...

ԴԱՆԻԵԼ - *(Նետվելով Մարիամիկի կողմը)* Մեծանամ քո փեսայիդ համար հազար հատ վերնաշապիկ պիտի առնիմ... Քեզի համար ալ պսպղուն քարեր պիտի առնիմ, որ զարդարվիս ու անչափ սիրուն ըլլաս:

ՄԱՐԻԱՄԻԿ - Շնորհակալ եմ, եղբայրս... Ուզենաս նե քեզի ալ մեզի հետ Հունաստան պիտի տանինք...

ԴԱՆԻԵԼ - *(Հիմա էլ նետվելով Մարիայի կողմը)* Ես իմ մայրիկիս չեմ թողնիր ու տեղ մ'ալ չեմ երթա... Ան որ ծեր մամիկ դարձավ, ես պիտի բռնեմ անոր ձեռքը ու պտույտի տանիմ... անուշեղեն պիտի առնիմ, որ ուզե...

ՄԱՐԻԱ - Շատ կսիրեմ անուշեղեն...

ԴԱՆԻԵԼ - Մայրիկ Փառանձեմին ալ պիտի պտույտի տանիմ և անոր ալ անուշեղեն պիտի առնիմ...

ՓԱՌԱՆՁԵՄ - Սիրտս տակնուվրա ըրիր, մանչս... Հադե, երթանք, շատ գործ ունինք, մանավանդ, որ Բեյրութ պիտի իջնանք, որ թոքախտանոցի բարեգործական արկղին մեջ դրամ նետենք... *(Մարիային)* Ըսե ինձի դուն չես կրնա այդ դրամը անձամբ ձգել... Դուն քո թոշակդ արդեն պտուղ առնելու և թոքախտանոցին կուտաս... Ինչու՞ ուրեմն՝ ոչ անձամբ... Անպայման երեխաներուն կբաժնիս, որ անոնք նետեն բարեգործական արկղին մեջ...

ՄԱՐԻԱ - Անոնք ատորով գթասրտության դասեր կառնին...

ՓԱՌԱՆՉԵՄ - *(Աշխեմին)* Հասկցա՞ր...

ԱՇԽԵՆ - Ես վաղուց եմ հասկցեր...

ՓԱՌԱՆՉԵՄ - Ինչ կսես... Հադե գացինք...

Բոլորը դուրս են գնում: Բեմում խտանում են լույսերը: ՄԱՐԻԱՆ մենակ է: Լսվում է ԱՆՃԱՆՈԹ ՉԱՅՆԸ:

ԱՆՃԱՆՈԹ ՉԱՅՆ - Մարիա... Քո օրը վերջացավ... էլ մի համառիր... Բաց են դռները հավերժական քո օթևանի...

VIII

ԿՆՈՋ հայացքի առջև իր մտասևեռումի պատկերներից մեկն է: Գիշերային ՉՈՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒՆ թակում է «Թռչնոց բույնի» դարպասը:

ՊԱՀԱԿ - Ո՞վ է...

ՉՈՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Ճանապարհորդ:

ՊԱՀԱԿ- «Թռչնոց բույնն» է ասիկա, հյուրատուն չէ... Բեյրութ քաղաքը վարն է, հյուրատունները հոն են: Ձեյտայի բարձունքն է ասիկա, քիչ անդին Բիբլոսն է... Բիբլոսին ավերակները *(բարկացած)* ճանապարհորդը լույս օրով կբարձրանա Բիբլոս... Հիմա գիշեր է... Ասիկա ալ հյուրատուն չէ... Ասիկա որբախնամ տուն է...

ՉՈՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Ամեն ինչ ճիշտ է, բարեկամս: Հայտնեցեք տիրուհուն, որ...

ՊԱՀԱԿ - Դուն ինչու՞ կուլաս, մարդ... Քեզի տեղ կցավի՞...

ՉՈՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Կցավի:

ՊԱՀԱԿ - Հոգիդ կցավի անշուշտ...

ՉՈՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Ատիկա է...

ՊԱՀԱԿ - Չըսես պատճառը...

ՉՈՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Քանի մը բառով ըսվելու չէ...

ՊԱՀԱԿ - Բայց դուն ո՞վ ես... Կերևի հայ չես... օտար ալ չես...

ՉՈՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Այդքան կբավե, բարեկամս... Օտար չեմ, ուրեմն վստահաբար կրնաս բացել դուռը իմ առաջ... Կրնաս հայտնել տիրուհուն, թե եկել է ան, որն այստեղ հասնելե առաջ փորձեց անցնել Հայաստանով...

ՊԱՀԱԿ - *(Հուզված)* Դուն տեսար Հայաստա՞նը...

ՉՈՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Ոչ... Թուրքական կառավարությունը չարտոնեց... *(Լռություն)* Կրնա՞մ մտնիլ:

ՊԱՀԱԿ - Այո... Անշուշտ...

IX
ՏԵՍԱՐԱՆ ԴԱՏԱՐԿ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Խավարի մեջ հայտնվում է թույլ լուսավորված ՉՈՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒՆ:

ՉՈՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Մարիա...

Պայծառ լուսավորվում է տարածությունը: Խորքում ՄԱՐԻԱՆ է:

ՉՈՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Ես եկա, Մարիա...

ՄԱՐԻԱ - Դու լու՞ր ես բերել Դանեմարքայեն...

ՉՈՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Ես ծաղիկներ եմ բերել Դանեմարքայեն...

ՄԱՐԻԱ - *(Բանաստեղծություն արտասանելու նման)* Ծաղիկները այն միակն էին այն բոլոր ծաղիկներու մեջ... Ուր էլ որ երթաս՝ հետդ վերցրու փունջ մը անմոռուկ, որ նորեն դառնաս քո հողն հարազատ... Քանզի Դանեմարքայի ծաղիկները նուրբ՝ ունին ճանապարհներուն մոլորվածներուն տուն դարձնելու ուժ... Կհիշե՞ս երգը *(դադար)*: Ես մոռցա ինձի հետ վերցնել Դանեմարքայի մաքուր դաշտերուն անմոռուկները... Այդ պատճառով ալ կախարդվեցա ու մնացի այս հեռու-հեռու երկիրը...

ՉՈՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Դանեմարքայի ծաղիկները ես բերել էի դնելու իմ սիրելիների շիրիմներուն... Խարբերդին գերեզմանոցին մեջ...

ՄԱՐԻԱ - Անոնք թառամել էին...

ՉՈՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Հայրենի երկրի ծաղիկներն անգամ թառամած, մեծ, սքանչելի մխիթարություն մեն օտարության մեջ հանգչող հարազատներու շիրիմներուն... Սակայն 1915 թվականեն քառասուն տարի անցնելեն հետո անգամ թուրքական կառավարությունը վախեցավ ինձի՝ Խարբերդ ծառայած դանեմարքացի միսիոներիս, արտոնել Հայաստան մտնել... Ես ծաղիկները քեզի բերեցի, Մարիա...

Ձգուշորեն ազատում է թղթե փաթեթից չորացած ծաղիկների փունջը և մեկնում կնոջը: Իսկ նա փունջը վերցնելով այնպես է սեղմում կրծքին, կարծես ծեռքինը հիվանդ երեխա լինի:

ՄԱՐԻԱ - Երախտապարտ եմ... բարեկամս...

ՉՈՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Բարի տեսա քեզ, Մարիա...

ՄԱՐԻԱ - Բարի տեսա քեզ, Հենրի Ռիկզ... Որուն անձնական տառապանքը 1915 թվականին չափվեց բուն ժողովրդին տառապանքին հետ... Թուրքական մոլեգնության հետ կմոլեգնեին նաև տարափոխիկ հիվանդությունները, որոնք մեր միսիոներական տնեն շատերուն խլեցին... Քո հարազատներն ալ գնացին... Մայրդ, կինդ, սիրասուն դուստրդ, փոքրիկ էնին...

ՉՈՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Հայաստանին մեջ թողել եմ իմ սիրտս, բարեկամս... Ես նորեն Հայաստան եկա անոր կանչով...

ՄԱՐԻԱ - Բարի տեսա քեզ, եղբայր իմ Հենրի Ռիկզ...

ՉՈՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Դուն վերապրող հայ մանուկներու համար, որպես տուն ընտրեցիր հինավուրց Բեյրութի և Բիբլոսի միջև ընկած այս բարձունքը, ի՞նչ նկատառումով...

ՄԱՐԻԱ - Անոնց համար ես ավելի գեղեցիկ տեղ մը չէի կրնա ցանկանալ, քան այս է, մանավանդ որ Լիբանանի կառավարությունը սիրով աջակցեց, երբ թուրքական կառավարությունը մերժեց Խարբերդին մեջ վերապրող մանուկներու որբախնամ տուն բացելու իմ խնդրանքս...

ՉՈՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Եթե հայ մանուկը զրկված է իր պապենական հողեն, եթե ան իրավունք չունի տերն ըլլալու իր նախնիներու հայրենիքին, ուրեմն այս բարձունքը՝ Միջերկրական ծովին հարևանությամբ, անոր վիրավոր, սահմռկած հոգուն համար բալասան պիտի ըլլա...

ՄԱՐԻԱ - Անգամ փոթորկի պահուն ծովին վրդովված շունչը հոս կհասնի խուլ և հանդարտված... Նույնիսկ ծմռան բքաբեր քամիները երբեք այնչափ կատաղի չեն վայե այս բարձունքներուն, որքան Հայոց լեռներին վրա: *(Դադար)* Հայոց լեռներու ծյունաբուքը կոռնար, կարծես միլիոն բորենի միաժամանակ... Ամեն անգամ, երբ այդ ոռնոցը դուրս կըսողա հիշողությանս բավիղներեն, ես նորեն կապրիմ այն օրվան մեծ սարսուռը, խենթ ընող սարսափը... Կհիշե՞ս այն ծյունաբուքը... չարագուշակ, ահարկու: Պարոն Միքայելը, մեր սիրելի դոկտորը, նոր էր եկել Տիգրանակերտեն, կպատմեր Տիգրանակերտի շուկայի դեպքը:

Հեռավոր, խավար անկյուններից մեկում հայտնվում է բժիշկ ՄԻՔԱՅԵԼԸ: Նա առաջանում է մոլորված, շվարուն քայլով...

ՄԻՔԱՅԵԼ - Տիգրանակերտի շուկայում հազար վեց հարյուր խանութ հրդեհեցին... մարդկանցով, ապրանքով, գրաստով... Քաղաքին ողջ հայությունը նետվեցավ հանգցնելու հրդեհը, սակայն թուրք ոստիկանության աջակցությամբ, թուրք մոլեռանդ ամբոխը հարձակվեց անզեն, անպաշտպան հայերու վրա, և քիչ անց անոնք, որ եկել էին հրդեհ հանգցնելու, հայտնվեցին անոր բոցերուն մեջ... Մեկ-երկու հոգի ազատեցանք... որովհետև դեպքին վայրն հասանք, երբ ամեն բան արդեն վերջացել էր:

ՄԱՐԻԱ - 1915 թվականի հունվարի 6-ն էր, դուն կպատմեիր քո պատ-

մությունը, որը սակայն անիրական կթվար... մինչև որ օր մը, ամիսներ անց, նույն այդ 1915 թվականի օգոստոսի 6-ին *(Ռիկզին դառնալով)* կհիշե՞ս... ականատես եղանք Չմշկածագին հրդեհին... Պարոն Միքայելը չկար այլևս... Դուն չկայիր, բարեկամս... դուն չկայիր... քեզի տարել էին քու սիրած լեռները և մաս-մաս հոշոտել էին... Ես կխոսիմ հրդեհի մասին, որ Չմշկածագը կայրեր... Շատ մը գյուղեր, ընդարձակ դաշտեր ու պարտեզներ կայրեին... Սոսկալի, զարհուրելի հրդեհ: Թեև գիտեինք, որ կրակը մեզի չէր կրնա հասնիլ, շնորհիվ Եփրատի... Սակայն ատիկա ինչ մխիթարություն էր, երբ անդին գյուղերուն մեջ կենդանի կայրեին հայերը... *(Ռիկզին)* Կհիշե՞ս, տարի մը առաջ մենք այցելել էինք այդ բոլոր գյուղերը... Այդ գյուղերեն շատ մը անմոռանալի և օրհնված հիշողություններ ունեինք... Արդյո՞ք մեր սիրելիներեն քանիսը այրեցան... Կհիշե՞ս, մենք ծունկի իջանք, առ Աստված աղաղակեցինք, որպեսզի ան դադարեցներ այս սոսկալի դեպքերը և մեզի ալ ուժ տար, որ դիմանայինք մինչև վերջ... Ես հիմա էլ ահա կտեսնիմ բոցերը, որ կը մագլցեն դեպի լեռները և թանձր մուխի սյուները... Թանձր մուխի: Եվ չորս կողմի մզկիթներու գագաթներեն լսվող մոլլաներու ծորուն, միալար ոռնոցը...

ՉՈՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Մարիա...

ՄԱՐԻԱ - Ես ամեն բան խառնեցի... Ձյունաբուքի օրը հրդեհի օրը չէր... Ես հերթով կուզեմ հիշել, սակայն... ամեն բան կխառնվի իրարու... Հիմա ես կխոսիմ 15 թվի հունվարի 6-ի մասին... Դոկտոր Միքայելը կպատմեր... Ի՞նչ կպատմեր...

Ահաբեկված հայացքը իր դիմաց հառած Մարիան առաջ է մղվում, կարծես դեպի հիշողության մեջ ժայթքող բոցերը: ՉՈՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒՆ ձեռքը մեղմորեն դնում է նրա ուսին:

ՉՈՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Մարիա, դոկտոր Միքայելը հավաստի աղբյուրե մը իմացել է, թե գաղտնի հրաման մը կա բոլոր մտավորականներուն բանտարկելու մասին...

ՄԱՐԻԱ - Դոկտոր Միքայելը Խարբերդի ու Մեզրեի դանիական դարմանատներու պրոֆեսորն է... Ան կգտնվի մեր դրոշին պաշտպանության տակ: Օրենքով բժիշկները...

ՄԻՔԱՅԵԼ - Ի՞նչ օրենք... Թուրքիո մեջ ի՞նչ օրենք... Այստեղ բոլոր օրենքներն ալ միշտ ձևական են...

ՉՈՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Բայց պատերազմ է... Անոնք բժիշկներու և դեղա-

գործներու շատ կարիք ունեին...

ՄԻՔԱՅԵԼ - Մի՞թե անոնք հողագործին ու արհեստավորին կարիք չունին... Չէ՞ որ իրենք աշխատող չեն... Անոնք չսպանեցի՞ն դեղագործ Թորոսը...

ՉՈՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Ան հեղափոխական էր, զենք կպահեր...

ՄԻՔԱՅԵԼ - Կափսոսիմ, որ ես ալ հեղափոխական չեմ եղած... Մի՞թե ամեն օր Խարբերդի գավառն չէր հավաքեր մտավորականներուն Կարմիր ղոնախ բանտին մեջ զանազան պատրվակներով, բոլորը մեկտեղ գազանորեն հոշոտելու համար... Թուրքիո բանտեր... Մարդ արարածին նսեմացնելու, տառապանքի ու չարչարանքի կատարելության հասած որջեր... Եվ հայոց լավագույններն այնտեղ... իմացեք, հայերու համընդհանուր ջարդերու մասին լուրերը ճշմարիտ են... Եվ հայերն անզոր են ատոր առաջն առնիլ, այնպես կապրին, կարծես ապրելու լոկ քանի մը վայրկյան ունին միայն... Հայը գիտե՝ կերթա դեպի գերեզման... Երեկ մեկը ինձի ըսավ. «Ես զինվորության կերթամ»... Ըսավ այնպես, կարծես կուզեր ըսել. «Ես մեռնելու կերթամ»: Թուրքերը կանանց ու աղջիկներուն կստիպեն իսլամանալ հարեմներուն համար, նույնիսկ հինգ-վեց տարու աղջիկներուն... Անոնք փոքրիկ մանչերուն թլպատելով կթուրքացնեն:

ՄԱՐԻԱ - Այսօր լուսաբացին անոնցէն մեկը մեռավ... վեցը տարու էր... Ձեռքերուս վրա մեռավ... Ձինվորներն անոր թլպատել էին կեղտոտ, ժանգոտած ածելիով... Մանչուկ միկրոբ առած էր... Կապտած, ուռած ոտքերը քարշ տալով հասել էր մեր դուռը... Մենք ներս առինք... Ես չկրցա անոր փրկել... Ես չկրցա... Փոքրիկը փրկիլ...

ՉՈՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Խաղաղվիր, Մարիա...

ՄԱՐԻԱ - Կփափագիմ... Սակայն ինչպե՞ս...

ՉՈՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Հայերու սրտերը վիրավոր են... Անոնք մխիթարության մեծ կարիք ունին, սակայն միայն մխիթարելն ու կարեկցելը քիչ է, հարկավոր է ամենածայրահեղ լարումով մը կազմակերպել միսիոներներուս ուժերը անոնց ֆիզիկապես և տնտեսապես պաշտպանելու և խնամելու համար:

ՄԱՐԻԱ - Այսօր ես գնացի խնամելու և պաշտպանելու հայերը: Անոնց զրկել էին տուներեն ու քշել գերեզմանոց, առանց կտոր մը հացի, առանց կտոր մը փալասի, որով ծածկվիլ կրնանային ծյունաբուքեն: Ինձ չթողեցին մտնել գերեզմանոց... Թուրք ասկյարները և կրոնա-

վորներ... «Խանում, էֆենդիս արգելած է որևէ մեկի շփվիլ անոնց հետ, հայերը ժանտախտով են հիվանդ»... Թուրքերը սուտ կխոսին: Ես ըսի. «Ես գթության քույր եմ... Խնամեցեք մեր հերոս զինվորներուն...»: Եվ դեռ կըսեք, թե համընդհանուր ջարդ մը կպատրաստվի... Հալածանքներեն, չարչարանքներեն շատերը մեր դարմանատներուն առջև կմեռնին և որպեսզի իրապես ժանտախտ չտարածվի՝ մենք ակամա գերեզմանափոր կդառնանք... Ապա ի տես այս անպաշտպան ժողովրդի տառապանքներուն՝ հոգնությամբ կնվաղինք նաև մենք... Կնվաղինք... Կնվաղինք...

ՉՈՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Մենք սիրով եկանք մեր երկրեն տառապանքի այս երկիրը և սիրով պիտի քայլենք անոր հետ խաչելության իր ուղիով...

ՄԱՐԻԱ - Այո... սիրով... Սակայն դեռ ուղեղիս մեջ կվառվի 1915 թվականի հունվարի 6-ի ձյունաբուքի հրդեհը, միլիոն բորենու ուժով ոռնացող քամու ձայնը...

Տեսարանում ձյունաբուքն է՝ մոտիկ, ահարկու... Ապա այդ ոռնոցի մեջ են ներխուժում թմբկուների զարկեր, ամբոխի աղաղակ... «Ալլահ... ալլահ...» բացականչող ձայներ...

ՄԱՐԻԱ - Ահավասիկ...

ՄԻՔԱՅԵԼ - *(Սարսափահար)* Դերվիշ մոլլաները...

ՄԱՐԻԱ - Անոնք...

ՄԻՔԱՅԵԼ - Մոլեռանդ, քան աշխարհի բոլոր մոլեռանդները միասին... Ահավոր, քանզի կղեկավարվին միայն բնազդային ահարկու մղումներով... Անոնք թուրք ամբոխին գրգռվածությունը կհասցնեն մինչև ատելության նոպաներեն գալարվող արյունռուշտ վիճակի... Անոնք երիտասարդ, անոնք ալևոր, գոտիկներեն կեռ թուր կախած... Անոնց առաջնորդ շեյխը ջորի հեծած, պարանոցեն կախված իրենց արյունածոր Դորանը, անոնք կտանին կանաչ գույնով՝ լուսնի մահիկը՝ վրան իրենց դրոշը... Այսօր լուսավորչականներուս ծնունդին տոնն է. «Օրհնյալ է ծնունդն Քրիստոսի...»: Անոնք եկել են պայծառ տոնը արյան մեջ ընկղմելու համար...

Դրսից լսվող մոլլաների կատաղի բղավոցները ավելի ահարկու են դառնում: Առանձնանում է մի քանի բառ, որն հատկապես կրկնվում է:

- Ալլահը որոշել է՝ այս տարի ջուրի տեղ արյուն հոսի ու կհոսի...

ՉՈՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Անոնք կկոտորեն մանուկները *(Դուրս է նետվում)*:

Եվ հանկարծ ձյունաբուքի և մոլլաների ոռնոցի վրա տարածվում է մանկան մաքուր, զուլալ երգը:

ՄԱՆԿԱՆ ԵՐԳԸ - «Ավետիս... Ավետիս... Այս նորածին Տէրն և Արքայն, Ավետիս... Օրհնե զձեզ զամենեսեան, Ավետիս...»:

Հիմա մի խումբ մանուկներ են երգում «Ավետիսի» պատգամը: Եվ այդ երգից կարծես հաղթվում են ծյունաբուքի և մոլեռանդների ճիչերը...

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԽՄԲԵՐԳԸ - «Օրհնէ զձեզ զամենեսեան, Ավետիս... Եւ զընտանիս ձեր միաբան, Ավետիս, Տայր ձեր բարեացն լիութիւն, Ավետիս, Եւ ձեր որդւոցն առողջութիւն, Ավետիս, Ննջեցելոցն ձեր ողորմի, Ավետիս, Եւ պարգևէ արքայութիւն, Ավետիս...»:

Խտանում են լույսերը: Տեսարանում միայն Մարիա Յակոբսոնն է՝ հայացքն հառած այն կողմ, որտեղից առաջանում է երգող մանուկների խումբը: Նրանք ճերմակազգեստ են և ճակատներին ծաղկած նշենու ճյուղերից պսակներ են... Նրանց ձեռքերին վառված մոմեր են: Նրանք գալիս մտնում են տեսարանի մեջ անշտապ, դանդաղ, հայացքները խոնարհած իրենց մոմերի դողդոջուն բոցերին... Գալիս՝ հեռանում են, ընկղմվելով խավարի մեջ՝ մանկան մենավոր ձայնը ունենալով ուղեկից...

- «Եւ պարգևէ արքայութիւն, Ավետիս...»:

Մարող, հեռացող երգի վրա տարածվում է եկեղեցու մի հատիկ զանգի զանգահարությունը: Տեսարանում Մարիա Յակոբսոնն է, տառապալից հայացքը դեռ հառած այն կողմ, որտեղից խավարի մեջ ընկղմվեցին ճերմակազգեստ մանուկները: Ճերմակազգեստ մանուկներից հետո հայտնվում է ԿԱՐՄՐԱԶԳԵՍՏ ԿԻՆԸ Հայոց հնամենի ողբերգը երգելով: ՄԱՐԻԱՆ լուսնոտի քայլերով մոտենում է նրան, ծունր իջնում նրա քղանցքների մոտ, և փաթաթվում նրանցով:

ՄԱՐԻԱ - Ո՞վ ես դուն, որ կերթաս ճերմակազգեստ մանուկներու հետքեն, իմ ուղեղիս, իմ հիշողություններուս ջերմին մեջեն ողբերգ հնչեցնելով... որ հիվանդ կդարձնե լսողությունս... Գիտե՞ս... ես այնպես կարոտցել եմ իմ Դանեմարքաս... Կարոտցել եմ անոր խաղաղ, մաքուր դաշտերը... Գիտես, կուզեմ բոբիկ քայլել անոր ծաղկոտ հովիտներով, որ ցողը թրջե ոտքերս, կուզեմ երեսնիվայր իջնալ ծաղիկներու մեջ և խմել անոնց բույրը... Ո՞վ ես դուն արդյոք... որ կհայտնվիս ուղեղիս ջերմին մեջ եղերամոր մը պես և կջնջես հիշողությունը հայրենիքիս մաքուր դաշտերու... Հայոց եղերական ոգի՞ արդյոք... Ծածկե ինձի քո քղանցքներովդ, փակե սգավոր աչքերս, որ չտեսնամ ու լսողությունս միայն լցրու ողբերգիդ մեղեդիովը... Ահա... Նորեն փակե աչքերս... Նորեն բանտարկյալներուն կհանեն բանտեն, Կարմիր ղոնախ բանտեն... Յուրաքանչյուր տասին պարանոցներով

շղթայել են իրարու... Օղակներու տակ որևէ բան չկա՝ իրենց մորթն է միայն... Օղակները ծանր, խորդուբորդ... Անոնք մտավորական, բժիշկ, ուսուցիչ, հոգևորական... Անոնց կտանին լեռները, որ մորթեն... Բժիշկ Միքայելը, պրոֆեսոր Որբերյանը, անոնց անգամ չեն խնայած... Իսկ անոնք որքան թուրքեր են փրկել մահեն իրենց բժշկությամբ, նույնիսկ Ստամբուլի պալատին մեջ... Չեն խնայած իրենց փրկիչները...

Տեսարան է մտնում փշե պսակներով ՃԵՐՄԱԿԱԶԳԵՍՏ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ խումբը: Նրանց հետ բժիշկ ՄԻՔԱՅԵԼԸ:

ՄԻՔԱՅԵԼ - Իմ ձեռքերս փաթաթեցին լաթով, քարյուղին մեջ թաթախեցին և վառեցին... Իմ թևերը երկու բոցակեզ ջահեր՝ պարզեցի դեպի երկինք... որ քո պաշտելի Աստծո քթին հասներ ճենճերահոտը և մրմուռը իմ և իմ պաշտելի ժողովրդին... Ես չկրցա աղաղակել, ինչպես քո Հիսուսդ աղաղակեց Գեթսեմանիի պարտեզներու մեջ... Անցցո զբաժակս յինեն... Հոգիս հոժար է, մարմինս տկար... Ըսե կին, որ այդքան կպաշտես քո Աստվածը, ինչու՞ անմեղորեն տառապող ժողովրդին հոգին հոժար պիտի ըլլա... Ինչո՞ւ այդ հոգին դարեր ու դարեր վայրագորեն բզկտվի ու նորեն հոժար պիտի ըլլա այս խաչին... Կանիծեմ Աստված, եթե կդատապարտե իրեն պաշտող անմեղ ժողովուրդը անլուր չարչարանքներու խաչին գամելուն... Երիցս կանիծեմ...

Հզոր ողբերգական երաժշտության տակ դեպի ԼՈՒՍԵ ԽԱՉՆ են գնում ճերմակազգեստ տղամարդիկ, փշե պսակներով:

ՄԱՐԻԱ - Անոնց կտանին լեռները, որ մեծ չարչարանքով սպաննեն... Գիշերը մենք, խումբ մը դանեմարքացի միսիոներներս, անոնց հետքերով կբարձրանանք լեռները, որպեսզի սպանված, մերկ մարմիններու միջով զգուշորեն անցնելով՝ աղաղակենք ամայության ու վշտի գիշերին մեջ... «Ձայն տվեք, ողջեր...», որ զգուշորեն, գաղտնի ցած բերեք... ու գաղտնի խնամենք վիրավոր, ողջը, ողջը... Ձայն տվեք ողջեր... *(Աղաղակում է)* Ձայն տվեք ողջե՛ր...

Հանկարծ ողբերգական երաժշտությունը մեկից ընդհատվում է, և լսվում է սրնգի նվագ: Մարիան ցնցված անսպասելությունից, շրջվում է այն կողմ, որտեղից լսվում է նվագը: Ճերմակազգեստ տղամարդկանց խմբից անջատվել է մի երիտասարդ, որը Փշե Պսակը և սպիտակ Խաչը դրել է իր ոտքերի մոտ և սրինգ է նվագում՝ Հայոց հին, գեղեցիկ, զվարթ մեղեդիներից մեկը... Սրնգահարը այնպես է տարված իր նվագով, որ չի նկատում կնոջը, որն ապշահար պտտվում է իր շուրջը՝ փորձելով հասկանալ այս երևույթը...

ՄԱՐԻԱ - Տղաս... որքան ուրախ եմ, որ դուն ողջ ես... Դուն անջատվեցար այն ծերմակազգեստ խումբեն: Դուն քո փշե պսակդ մեկ կողմ ձգեցիր, ուրեմն կապրիս...

ՍՐՆԳԱՀԱՐ - Դուն չե՞ս ճանչնար ինձի... Ես Եփրատ կոլեջի երաժշտության ուսուցիչն էի... Օրիորդ Յակոբսոն, կհիշե՞ս, օր մը Եփրատ կոլեջի կողմեն ձեզի՝ դանեմարքացի միսիոներներուդ, հրավեր բերեցի Խարբերդի դաշտը պտույտի երթալու... Մոռացել ես արդյո՞ք... Եփրատ կոլեջի բոլոր սաները, ուսուցիչները և դուք ալ մեզ հետ իջաք Խարբերդի Ոսկեղենիկ դաշտը պտույտի... Դուն շատ սիրեցիր... Դուն շատ սիրեցիր այս մեղեդին, որ կնվագեի սրինգի վրա... Հիմա նվագեմ, որ նորեն լսես... Գիտես՝ Խարբերդին Ոսկեղենիկ դաշտը այլևս Ոսկեղենիկ չէ...

Սրնգահարը շարունակում է ընդհատված մեղեդին: Ավարտելով, հեռացնում է սրինգը շուրթերից և ժպտում է կնոջը:

ՄԱՐԻԱ - *(Աղաղակում է)* Տե՜ր իմ, ազատիր ինձ անոնց անհասկանալի, տարօրինակ ժպիտների հիշողությունեն, որով գնացին մեռնելու օր մը կատաղի ու բիրտ թշնամիին ձեռքեն... Անոնց ժպիտը... որ նորեն կտեսնիմ այս սրնգահարին շուրթերու վրա... Եթե դուն ողջ ես, ժպտա ինձի ուրիշ կերպով մը, ոչ այնպես, ինչպես կժպտային այն մեռնողները... Մեռնելիս անոնք ինչու՞ կժպտան... Համակերպվածություն՞ էր ատիկա, արդյո՞ք հոժար է մարմինս և հոգի՞ս է հոժար, թե՞, խղճության կամ սարսափելի դիմախաղ մը...

ՍՐՆԳԱՀԱՐ - Ոչ... ոչ, ի՞նչ կըսես... Ինչու՞ խեղճության... Ինչու՞ սարսափի... Մնացողներուն հուսադրելու անմեղ փորձ մըն է... Անոնք, որ կերթան մեռնելու, իրավունք չունին հրաժեշտին համար զրկել իրենց հարազատները, իրենց սրտերուն սեղմելու անոնց... Անոնց շուրթերը փակ են բառին ու խոսքին համար, որովհետև արգելված է խոսիլ... Սակայն ժպիտին համար անիկա ազատ է... Ի՞նչ ուժ կրնա արգելել մահվան դատապարտվածի մը ժպտալ...

ՄԱՐԻԱ - Եվ անոնք կժպտան՝ շղթայվածները, այն խումբը ծերմակազգեստ, որոնք ծերմակազգեստ առաքյալներու պես լույսերով օծուն կերթային դեպի հավիտենություն... Սակայն դուն ինչո՞ւ... Դուն ո՞ղջ ես, ճի՞շտ է...

Սրնգահարը դնում է փշե պսակը, և հետևում է ծերմակազգեստ տղամարդկանց: Դեպի ԼՈՒՍԵ ԽԱՉԸ:

ՄԱՐԻԱ - Ոչ... Մի երթա... Դուն ողջ ես... Ողջ ես...

ՍՐՆԳԱՀԱՐ - Պահե սրինգս... Ան քեզի անուշ մեղեդիներու հիշողություններ կրնա ընծայել... Պահե սրինգս...

Մարիան վերցնում է սրինգը, սեղմում կրծքին... Հայացքը հառած ճերմակազգեստների ճանապարհին:

ՄԱՐԻԱ - Անիծվեք դուք, որ պալատներու մեջ կապրիք և պատերազմներ կհորինեք... Անիծվեք, կմաղթեմ, որ այս տառապյալներու տեղը դուք ըլլաք... Մարդ արարածի գեշ արարքներ... Ես վկաս ու ականատեսս բարի, իմաստուն ժողովրդի մը ազգովին մարտիրոսության... կանիծեմ:

ԱԿԱՆԱՏԵՍ Ա - Բարբարոս, քինախնդիր չարչարանք... Լեռներիս ցուրտ գագաթներուն, բարձր լանջերուն սփռված չարչրված մեռյալների բաց թագավորություն, վայող սառցաշունչ քամի և այս խղճալի մանուկը... մերկ՝ Աստծո և արդարության դիմաց... Մինչև իմ մահս, այս պատկերը պիտի հառնի աչքերուս առջև որպես դաժան մտասևեռում... Եթե որևէ մեկը համարձակվի ըսել, թե այն ամենը չի եղել բնավ կամ թե եղել է բնավ ոչ այսչափ եղերական... ես կըսեմ... Ես՝ ականատես և վկա... Ես՝ դանեմարքացի միսիոներս... Կանչեք ինձ դատարան... Համայն աշխարհի արդարության մեծ դատարանը որպես ականատես, որպես վկա... ու ես կպատմեմ առանց ոչինչ ավելացնելու... Ես՝ ԱԿԱՆԱՏԵՍ, ես՝ ՎԿԱ:

Մարիա Յակոբսոնից քիչ հեռու հայտնվում է լույս, որը ողողում է գթության քրոջ հագուստով ԱՆԳԼՈՒՀՈՒՆ:

ԱԿԱՆԱՏԵՍ Բ - Ես անգլուհի եմ... Գթության քույր... Ես ԱԿԱՆԱՏԵՍ եմ, ես ՎԿԱ եմ... Ականատես հայերու ահավոր բռնագաղթին դեպի Միջագետքին անապատները, ուր մեծ չարչարանքով մը պիտի մեռնեին հրաշունչ արևուն տակ, թուրքերը որոշած էին բռնագաղթի ժողովրդեն մաս մը շոգեկառքով տեղափոխել... Ադանայի կառամատույցեն շոգեկառքին մեջ լեցուցին կիներ, մանուկներ, ծերեր... Իրարու վրա լեցուցին թխմված իրարու, անկարող ըլլալով շնչելու անգամ... Սակայն ատիկա դեռ ամենեն սարսափելին չէր... Ինձի վիճակված էր ահարկու անգթության տեսարանի մը ներկա ըլլալ... Մայրերը, անոնք մոտ էին պատուհաններուն, դուրս կհանեին իրենց մանուկները և լացով, աղաչանքով կխնդրեին կում մը ջուր անոնց համար... Անոնք հաց չէին խնդրե, անոնք կում մը ջուր կխնդրեին ծարավեն նվաղած հոգու հատորներուն համար... Կառամատույցը թուրք զինվորներով և ոստիկաններով էր լեցուն: Ոստիկաններեն

մեկը կանգնած կառամատույցին կենտրոնը գտնվող աղբյուրին խողովակին մոտ կպահեր ան, որ ոչ մեկը չկրնար հայուհիների խնդրած այդ մեկ կում ջուրը հասցնել անոնց մանուկներուն: Ես՝ Բրիտանական կայսրության մեկ քաղաքացիս, անոր Կարմիր Խաչին հավատավոր գթության քույրս *(ծունկի գալով)* ծունկի իջած վայրաբարո թուրք ոստիկանի մը դիմաց, արցունք աչքերուս մեջ, աղաչանք կընեի, որ ան թույլ տար ինձի ջուր վերցնել ծարուսվեն մեռնող երեխաներու շուրթերը թրջելու համար, որոնց տառապանքը կկրկնապատկիր ի տես քանի մը քայլ անդին խողովակեն առատորեն բխող ջրի... Ոստիկանը կհռհռար, կծաղրեր ինձի... Շոգեկառքը շարժվեցավ... Ոստիկանը կհռհռար... Ես դեռ ծունկի իջած էի անոր առաջ... Շոգեկառքին ձայնը հեռվեն-հեռվեն կուգար՝ սակայն ես անկարող էի ոտքի ելնել... Ոստիկանը կհռհռար *(ոտքի ելնելով)*... Ու հիմա, երբ կծարավիմ ու ձեռքս կմեկնեմ ջուրի գավաթին, իմ մտապատկերիս մեջ նորեն կծավալվի տեսարանը և հիվանդագին հուզումես ետ կքաշեմ ձեռքս ջրի գավաթեն ու երկար-երկար ատեն կտառապիմ ունկներուս մեջ արձագանքվող թուրք ոստիկանի հռհռոցեն և հայ մայրերու և մանուկներու աղիողորմ աղաչանքեն... Կանչեցեք ինձ դատարան... Համայն աշխարհի արդարության մեծ դատարանը: Ես ԱԿԱՆԱՏԵՍ եմ, ես ՎԿԱ եմ...

ԱԿԱՆԱՏԵՍ Գ - Ես ԱԿԱՆԱՏԵՍ եմ... Ես ՎԿԱ եմ... Իմ քարավանը կանցնիր Հայոց տարածքեն, ուր հողը, խոտը հագեցած էր արյամբ... Արյան զգայագրգիռ հոտը տարածվել էր կոտորածների վայրերեն բազում կիլոմետրեր հեռու... Հայոց ծաղկուն աշխարհ, որով միշտ ուրախությամբ անցել է իմ՝ արաբ վաճառականիս քարավանը, հիմա կանցնիր ընդարձակ գերեզմանոցի մը ընդարձակ բաց շիրիմի մը միջով... Իմ լսողությունս լիքն է իմ քարավանիս ոտքերուն տակ խշրտվող հայի ոսկորներու ահարկու ձայնով... (Դադար) Իսկ երբ հասանք Եփրատին... Տեսանք ջուրը կհորդեր, ողողելով ափերեն շատ հեռու... Ջուրը կհորդեր... դիակները լցվել էին տասներկու կամարով քարե կամուրջին անցքերը... Փակել էին կամարները... Ջուրը կհորդեր... Դիակների վրայով կրնայինք անցնել գետը... Կանչեցեք ինձ համայն աշխարհի դատարան... Ես ԱԿԱՆԱՏԵՍ եմ... Ես ՎԿԱ եմ...

ՄԱՐԻԱ - Ես՝ ԱԿԱՆԱՏԵՍ, ես՝ ՎԿԱ, կըսեմ ահա, հայ չարչրկված ժողովըր-

դին հիշատակը երբեք չպիտի մոռացվի... Վերապրող հայերը իրենք չեն կրնա երբեք մոռանալ... Հանգստություն անոնց մեծ տառապանքով զոհվածներուն... Անոնց սուրբ մեռյալները շիրիմներ չունին, չունին հուշարձաններ... Անոնք պատարագի կարիք չունին... Անոնք միայն հանուն արդարության՝ արդարության կարիք ունին... Եվ անոնք, որ դժոխքին ահասարսուռ բավիղներեն անցնելեն հետո կրցան ապրիլ՝ միշտ պիտի պահանջեն Արդարություն՝ հանուն Արդարության... Եվ ոչ բնավ Աստուծեն, այլ մարդկանցեն... և ատորով է, որ պիտի պաշտպանված ըլլա աշխարհին Արդարությունն առհասարակ...

X
ՏԵՍԱՐԱՆ ԴԱՐՊԱՍԻ ՄՈՏ

Գիշերային ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒՆ թակում է «Թռչնոց բույնի» դարպասները: Սա ԿԻՆ է ցնցոտիներով, մերկությունը հազիվ ծածկված, որն եկել է...

ՊԱՀԱԿ - Ո՞վ է...

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Բաց դուռդ, մարդ:

ՊԱՀԱԿ - Գիշեր է: Լուսանա՝ կբացեմ դուռը:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Դուն հիմա պիտի բացես...

ՊԱՀԱԿ - *(Խիստ)* Դուն ինչու՞ կհրամայես...

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Չեմ հրամայե... կխնդրեմ...

ՊԱՀԱԿ - *(Մեղմանալով)* Ի՞նչ իմանամ ով ես... Գիշերով ինչու՞ կթափառես Բիբլոսի ամայի բարձունքները...

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Ամայի՞... «Թռչնոց բույնը» մեծ տուն է... Շատ մանուկներու տուն է... Եկա ճանչնամ... Եկա անոնց մեջ կորցրածս գտնիմ...

ՊԱՀԱԿ- Կորցրածդ ու՞ր կորցրիր, կին...

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Տեր Զոր...

ՊԱՀԱԿ - *(Դուռը բացելով)* Տեր Զո՞ր... Տեր Զո՞ր ըսիր...

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Ես ավազներու մեջեն արահետ բացեցի... Լեռներ շրջանցեցի, շատերը ելա իրենց բարձունքները ու իջա, ապա քայլեցի... քայլեցի... Եփրատի արյունոտ ջրերու վայրով քայլեցի, Բեյրութ քաղաքին պայծառ լուսերու մեջ ծգվող փողոցներեն անցա... Եկա... հասա... Ես Տեր Զորեն եկա Տիրամոր ճիչը հոգուս մեջ... Ես Տեր Զորեն եկա...

ՊԱՀԱԿ - Տիրամոր ծի՞չը...

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Չե՞ս լսե... Ահա նորեն կճչա... պատեպատ կզարնվի հոգուս մեջ... Գլխուն մոխիր կցանե ու կճչա... Զավակս... Այդ մեկ հատիկ բառը միայն... զավակս... Թող ներս մտնիմ, մարդ... Տիրամոր ծիչը ինձի առաջնորդեց: Թող ներս մտնամ...

ՊԱՀԱԿ - Ողբը, որ իմ հոգիի մեջեն կձայնե՝ Տիրամոր Ո՞ղբն է:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Չէ՞իր գիտե... Ահա, գիտցիր, հիմի...

ՊԱՀԱԿ - Զգույշ քայլե տան մեջ՝ ամենքը խաղաղ քնած են... Ոտքդ զգույշ դիր... Քույրս... հարազատս... մանուկներուն քունը չխանգարվի հանկարծ...

XI

ՏԵՍԱՐԱՆ ԴԱՏԱՐԿ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Պայծառ լուսավորության մեջ, դեմ-դիմաց հայացքները միմյանց այչքերի հառած՝ կանգնած են ՄԱՐԻԱ ՅԱԿՈԲՍՈՆԸ և ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒՆ: Այստեղ-այնտեղ քարացել են ուրիշ ցնցոտիներով, մերկությունն հազիվ ծածկած, երեխաներ գրկած կամ շալակած ԿԱՆԱՅՔ և ԵՐԵԽԱՆԵՐ՝ կախ ընկած մայրերի փեշերից: Նրանք լուռ են: Չդիմանալով՝ Մարիան ճչում է:

ՄԱՐԻԱ - Ո՞վ եք... Ո՞վ եք...

Մի պահ մթնող տեսարանի մեջ անհետանում են կանայք, բացի ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒԻՑ:

ՄԱՐԻԱ - *(Շշուկով, լարումից հոգնած)* Ո՞վ ես...

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Չճանչցա՞ր...

ՄԱՐԻԱ - Ո՞վ ես...

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Չճանչցա՞ր...

ՄԱՐԻԱ - Ո՞վ ես...

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Ան, որուն մերժեցիր կտոր մը հաց իր զավակին համար... Ան:

ՄԱՐԻԱ - Մերժեցի՞ հացը...

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Աքսորի խումբերեն շատ քիչ վերապրողներս ետ կուգայինք... Քանի մը կիներու և մանուկներու հետ մենք Խարբերդ մտանք քու անունդ տալով... Սակայն դու մեզի ըսիր... չունիմ, բան մը չունիմ... Ըսե, որ կստեմ...

ՄԱՐԻԱ - Ոչ, ճիշտ է: Դանեմարքացի միսիոներական կազմակերպությունը դադարեցավ հինգ հազար աղքատի հաց բաժանելե 1917 թվականի հուլիսին, որովհետև դրամ չուներ այլևս, եթե ունենար ալ ան-

կարելի էր ցորեն գտնալ... Մեր տուներուն առջև, մեր շուրջը հարյուրավորները... Թուրքերը ամերիկացի միսիոներներուն վաղուց էին հեռացրել երկրեն, իսկ մենք պատերազմի պատճառով Դանեմարքայեն որևէ նպաստ ստանալու կարողությունե զրկված էինք... Խնայողություններով կերպ մը կտոր մը հաց կբաժնեինք սովյալներուն... Վերջը 1917 թվականեն այլևս անկարելի էր...

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Մի արդարանար...

ՄԱՐԻԱ - Արդարանա՞լ... Դուն ի՞նչ կըսես, կին, թե քու առջևդ արդարանամ, իմ Աստծո առջև ինչպե՞ս արդարանամ... Իմ հիշողությանս առջև ինչպե՞ս արդարանամ... Ահա նորեն կտեսնիմ ծեզի բոլորիդ... Կտեսնիմ...

Ցնցոտիապատ ԿԱՆԱՅՔ, որոնք երեխաների հետ պահվել էին խավարում, դանդաղ առաջ են գալիս և շրջապատում ՄԱՐԻԱՅԻՆ: Նա արագ դուրս է պրծնում իրեն նեղող ԿԱՆԱՆՑ շրջանից և փորձում է նրանցից հեռանալ...

ՄԱՐԻԱ - Գիտեք... գիտեք... որքան դժվար է ձեր ցավն ու չարչարանքը տեսնալ և չօգնիլ, բայց մենք այլևս չենք կըրնա... դրամ չունինք... ցորեն չունինք...

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Մենք կերթայինք դաշտերը, քանի դեռ կանաչություն կար, կհավաքեինք ու մեր մանուկներուն առջևը կլցնեինք, որ ուտեն, չէինք կրնա խաշել, փայտ չունեինք, աղ չունեինք... Բայց կհասկնաս, կին, անձրևը դադրեցավ, դաշտերը չորցան... Հիմի եկել ենք դուռդ... դուռդ...

ՄԱՐԻԱ - Չունինք, վկա է Աստված, չունինք...

ԿԻՆ Ա - Գթա, ինձի մի տուր... Ջավակիս տուր... Ան կմեռնի... Ան միակ ունեցածս է, որուն հափշտակեցի Տեր Զորին ավազներեն, ու քու դուռդ հասցուցի... Գթա... Հաց տուր...

ՄԱՐԻԱ - Անկարող եմ... անկարող եմ...

ԿԻՆ Բ - Անկարող չես, անարդար ես...

ԿԱՆԱՅՔ - Անարդա՞ր ես... անարդար...

ՄԱՐԻԱ - Ո՞չ... ո՞չ... ո՞չ...

ԿԻՆ Ա - Կին... *(Գրկի մանուկը մոտեցնելով Մարիային)* Կին, քու քթիդ հասել է տուներու, գոմերու, եկեղեցիներու մեջ ողջ-ողջ այրվածներու հոտը... Գիտե՞ս, մանուկներու հոտն առանձին է... Գիտե՞ս, մանուկներու հոտը կրնա՞ս տարբերել մեծերու խանձահոտեն, ճենճահոտեն... Ես այս մեկ հատիկս կրակներու մեջեն եմ հանե... դուն կու-

զե՞ս հավատալ... առ, հոտ քաշե... Դեռ ծխահոտ կուգա անոր փոքրիկ մարմնեն... Ծխահոտ...

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Կբոռայինք... կուլայինք... խնայեցեք... Մենք մուսուլման կդառնանք, թուրք, գերմանացի, արաբ, ինչ կուզեք... Մինակ մանուկս մի մորթեք... Մանուկները կդնեին իրարու վրա և կացնին մեկ զարկով... Դուն գիտես ինչ կնշանակե մահվան բաժակը խմել մինչև վերջին կաթիլը ու ողջ մնալ... Մեզի կքշեին մեր ծաղկուն շեներեն ու քշեցին անասուններու պես...

ԿԻՆ Գ - Կհիշեք... կհիշեք... ճանապարհի սկզբին դեռ եվրոպացիները կանգնած մեզի կդիտեին... Այդ եվրոպացիները...

ԿԻՆ Դ - Իմ աղջիկս... իմ լուսի կտոր աղջիկս կժպտար անոնց... այդ եվրոպացիներուն...

ԿԻՆ Գ - Անոնք գիտեին... գիտեին... որ մեր հրեշտակ մանուկները մորթվելու կերթան... Հաց տուր, թող ապրի զավակս... Ան պիտի մեծնա հոր պես քաջ... վրեժ պիտի լուծե իր մոր բռնաբարվելուն համար...

ԿԻՆ Դ - Տեր Զոր քայլող քարավանի մեջ քահանա մը կար... Ծեր քահանա մը... Երբ կարճ դադարեն ասկյարները մեզի կտանեին... ան իմ հատիկս կառներ իմ ձեռքես, կծածկեր իր բգիկ-բգիկ, պատառոտուն փարաջայովը, որ չըլլա թե ինձի տանող ասկյարը...

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Մենք ետ կուգայինք, ետ գալու չէինք...

ԿԱՆԱՅՔ - Ետ կուգայինք, ետ գալու չէր... Ետ կուգայինք, ետ գալու չէր...

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Ետ գալու չէր... ետ կուգայինք, որ մեր մեկ հատիկները բերենք հասցնենք քո դուռդ ու չէ՞ ըսես...

ՄԱՐԻԱ - Տանջանք է, տանջանք է... ծեզի չէ ըսելը...

ԿԻՆ Ե - Տանջա՞նք... Տանջա՞նք կըսես... Մի խոսե տանջանքի անունեն... Մի խոսե... Դուն ի՞նչ գիտես ինչ է ատիկա... Ատիկա հիսուներեք մարդով գերդաստանի մորթվիլ կնշանակե աչքիդ առջև... մեկիկ... մեկիկ... Տունեն տասներկու հողագործ... Գերդաստանիս սյուները՝ աշխարհին սյուները... Ակոսին մեջ տապալվեցին անոնք՝ իմ զավակներս, իմ թոռներս... Իսկ ամենեն փոքրիկ թոռներիս գիտե՞ս ինչ ըրին, գիտե՞ս... Թոնիրին վրա հսկա ամանով կաթ կեփվիր... Ես հարսներուս հետ կթել էի կովերը... Թոնիրին մարմանդ կրակներուն վրա հանդարտ կեռար կաթը... Կաթին անուշ բույր էր տանս մեջ... Անոնք ներս խուժեցին ու հոգուս հատորներուն մեկ-մեկ եռացող կաթին մեջ նետեցին... Մինակ աս իմ շալկինս մնաց, որ հարսներուս

մեկը նետած էր ամբարին ետևը... Հարսներս, աղջիկներս կբռնաբարվեին... Գերդաստանիս հիսուներեք հոգիեն ոչ մեկն ազատեցան... Մինակ ես ու ամենեն փոքր զավակիս զավակը... Կին, զավակիս զավակն է ասիկա... Պիտի ապրի... Ես անոր լացի ծայնն եմ լսել ու ետ եմ դարձել իմ դժոխքես... Թևս կտրած, արնաքամ... Կհասկնա՞ս, պիտի վրեժ լուծեմ անառակ աշխարհեն այս մանչը ապրեցնելով...

ԿԻՆԸ լաց է լինում, որը լացի նման չէ: Դա կարծես հեռավոր հիշեցնում է օրորոցի երգին «բուրրի», որը նրա չարչրկված հոգում վերածվում է մենավոր գայլի ոռնոցի «ուու»... ՄԱՐԻԱՆ սահմռկած փակում է ականջները:

ԿԻՆ Ա - Մի փակե ականջներդ... Լսե, լսե, որ հասկընաս...

ԿԻՆ Դ - Լսե, որ հասկընաս...

ԿԻՆ Գ - Արդեն բոլորն ալ այդպես են՝ ադ եվրոպաներեն եկածները... Անոնք կնայեն մեր տառապանքներին, ինչպես կնայեն լարախաղացի մը թռիչքներուն ու գրազ կուգան, թե կերպով մը պիտի ավարտենք մեր թռիչքները, թե վայր իջնելով պիտի ջախջախվինք... ադ գերմանացիները... բոլորը... բոլորը...

ԿԻՆ Բ - Մենք լարախաղացի մը պես կթռինք Աստծու քիթմռութն ի վեր և անիկա մեզի ծափ կզարկե... Այսպես: *(Ծափում է)* Այսպես... այսպես... ապրինք... ապրինք... լավ կթռնիք: *(Աղաղակում է)* Լավ կմորթվիք... լավ կբռնաբարվիք... Ապրիք... ապրիք...

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Դուն պիտի ասոնց հաց տաս... Դուն չհասկցար, որ պիտի ասոնց հաց տաս...

Հանկարծ ԿԱՆԱՅՔ կարծես հրամանով ընկնում են նրա առջև, փորձում են համբուրել փեշերը, ձեռքերը, լալիս են ու աղաղակում...

ԿԱՆԱՅՔ - Գթա՞... գթա՞... գթա՞...

ՄԱՐԻԱՆ հազիվ է դուրս պրծնում նրանց շրջապատումից: ԿԱՆԱՅՔ ավելի սաստիկ են ողբում և որ համբուրում էին փեշերը, սկսում են հարվածել նրան և կատաղի պախարակել:

ԿԻՆ Ե - Կմաղթեմ, որ դուն ալ ընկնիս իմ վիճակիս մեջ... Թող քու գլխուդ թափվի չարիքը, որ թափվեց իմ գլխուն.. Անիծվիս իմ բերանովս ու քու Աստծուդ կամքով... Թող Տեր Զորին ավազները խցկվին քո կոկորդդ, որ չկրնաս այլևս մեզի... «Անկարող եմ» ըսես... Կտոր մը հաց տալե հրաժարիս... Մենք եկանք քու դուռդ, որպեսզի գթաս և օգնես ու դուն ոչ ըսիր... Անիծվիս... Անիծվիս...

ԿԱՆԱՅՔ - Մենք եկանք քու դուռդ ու... դուն ոչ ըսիր...

ԿԱՆԱՅՔ այս խոսքերով հեռանում են, թողնելով ՄԱՐԻԱՅԻՆ ընկած ծնկներին սառած հայացքը ուղղած հեռացողները, ողբերգական զարմանքով:

ՄԱՐԻԱ - Անոնք... ամենքն ալ որքա՜ն նման էին Տիրամորը... և անոնց ծիչը... Արդյո՞ք այդպես կճչար Տիրամայրը իր զավակին չարչարանքներուն ի տես...

ՄԱՐԻԱՆ տարված հեռացող ԿԱՆԱՆՑՈՎ չի նկատում ՓՈՔՐԻԿ ԱՂՋՆԱԿԻՆ, որն իրենից ավելի փոքր երկու երեխաների ձեռք բռնած հայտնվում է նրա առաջ:ՓՈՔՐԻԿ ԱՂՋՆԱԿԸ ձգում է ՄԱՐԻԱՅԻ փեշը, և նա վերջապես սթափվում է ու տեսնում երեխաներին:

ՓՈՔՐԻԿ ԱՂՋՆԱԿ - Երեկ դուն ինձի հաց տվիր...

ՄԱՐԻԱ - Երեկը՝ երեկ էր...

ՓՈՔՐԻԿ ԱՂՋՆԱԿ - Կուզեմ, որ անոնց ալ հաց տաս...

ՄԱՐԻԱ - Երեկ մենակ եկար... Ովքե՞ր են... Քեզ նման ո՞րբ են...

ՓՈՔՐԻԿ ԱՂՋՆԱԿ - Թուրքեր են...

ՄԱՐԻԱ - *(Ապշահար)* Սխալ չլսեցի՞...

ՓՈՔՐԻԿ ԱՂՋՆԱԿ - Ես անոնց գտա... անոթի են... Հայրը ուր է, չեն գիտեր... Մայրը մեռած է... Հիվանդ է եղեր... Բղավեր է, բղավեր է ու մեռեր է... Անոթի են, հաց տուր...

ՄԱՐԻԱ - Հաց չկա...

ՓՈՔՐԻԿ ԱՂՋՆԱԿ - Այսօր միայն իրենց տուր... Երեկ իմ բաժինն ստացա... Այսօր իրենց տուր... Անոնք շատ են անոթի...

ՄԱՐԻԱ - Իսկ դուն անոթի չե՞ս...

ՓՈՔՐԻԿ ԱՂՋՆԱԿ - Անոթի եմ...

ՄԱՐԻԱ - Հապա ինչպե՞ս է, որ քեզի համար չես խնդրե, այլ անոնց:

ՓՈՔՐԻԿ ԱՂՋՆԱԿ - Անոնք փոքր են... Քանի օր է բան մը կերած չունին... Դուն երեկ ինձի հացի կտոր տվիր... Դուն ինձի իմ հացը վաղը տուր, այսօր իմ բաժին հացը անոնց տուր...

ՄԱՐԻԱ - Ուրկե գտար ասոնց:

ՓՈՔՐԻԿ ԱՂՋՆԱԿ - Աքսորի մեջ ես մոռցել էի իմ տունիս տեղը... Փողոցները կթափառեի ու օր մը տեսա իմին տունը, ճանչցա... բայց գիտեի, որ թուրքերը հոն կապրին... Վախցա մտնել... Քարի մը ետև պահվեցա ու հետևեցա... Տեսա, որ ոչ մեկը դուրս կելլա և ոչ մեկը ներս կմտնա... Այդ ատեն ես մտա... Տեսա ատիկա իմ տունս էր ու իմ տունս չէր... Խոհանոցը ամեն բան կեղտոտ, իրարու վրա էր թափված... Անկողիններու սպիտակեղենը սև դարձած էր... Իմ դաշնակս

այնքան թափած էին... Տունս ավերակ էր... Ինչու՞... չեմ գիտեր... Հոն մեզմե հետո մարդիկ կապրեին չէ՞...

ՄԱՐԻԱ - Մարդի՞կ... Թուրքեր... թուրքեր... դուն շարունակե պատմությունդ:

ՓՈՔՐԻԿ ԱՂՋՆԱԿ - Ասոնց մայրը ընկած էր գետնին՝ իմ մայրիկիս մետաքսե շրջազգեստը հագին... Կերևի թե քանի մը օր է մեռած էր... Փոքրիկները անկյուն քաշված կուլային... Ես էլ առի, բերի քովդ... Հաց տուր, անոթի են... Իմ բաժին հացը այսօր անոնց տուր...

ՄԱՐԻԱ - Քո բաժին հացը իմ բաժին հացն էր... Արդեն քանի օր է իմ բաժին հացն ալ կուտամ սովյալներուն...

ՓՈՔՐԻԿ ԱՂՋՆԱԿ - *(Լուռ, տատանվելով գրպանից հանում է մի ոսկոր և մեկնում Մարիային)* Աս ոսկորը վերցրու... Երբ ես գտա այլևս միս չկար... անոր վրա, բայց օգտակար է... Երբ անոթությունդ շատ ճնշե՝ դուն կրծե... Վաղը նորեն կուգանք... Թե հաց ըլլա պահե մեր բաժինը... Իմ մերիկը թե ողջ ըլլար... Իմ մերիկը... *(Հեռանում է)*:

ՄԱՐԻԱՆ նստած է ապշահար՝ ոսկորի կտորը ձեռքին: Հեռվից ՆՐԱՆ ընդառաջ են գալիս կանայք՝ ճերմակազգեստ, նշենու ծաղկած պսակներով: Ողբերգական երաժշտության տակ նրանք գալիս-անցնում են: Ապա՝ լռություն և մթություն: Ինչ-որ տեղ, հեռվում, լռության մեջ ծնվում է մի հատիկ եկեղեցու զանգի զանգահարություն:

ՄԱՐԻԱ - Ելիր, Մարիա... Քայլե աշխարհե աշխարհ... Եվրոպայեն մինչև Ամերիկա... Թող քեզի խոչընդոտ չըլլան օվկիանոսներն ու անապատները... Ելիր կոտորածներու դժոխային սպանդանոցեն ու գնա պատմե աշխարհին քո սգավոր աչքերովդ տեսածը... Իրապես հայուն տառապանքն այլևս հավերժական է դարձեր, Մարիա... Պիտի չերթա՞ս աշխարհին պատմելու... Խնդրելու անոր գթասրտությունը... Կհավատա՞ս, ճիշտ է, Մարիա..., որ գթասրտությունը դեռ կապրի մարդոց սրտերու մեջ... անոնք չպիտի կրնան մերժել քո պարզած ափիդ մեջ նետելու իրենց մեկ ավելորդ դրամը... Դուն պիտի ելնիս ու անցնիս սարսափի երկրին միջով, չարչրկված Հայաստանին միջով... Դուն պիտի ցնցվիս մինչև հոգուդ խորերը ի տես ավերակներու և մահվան անսահման հեռաստաններու... Պիտի ողողվիս անմեղ ժողովրդին հեղված արյան շիթերով... Պիտի քայլես անդունդներու և կիրճերու եզրերեն, որոնք բաց գերեզմաններ են... Դուն պիտի քայլես Հայոց աշխարհիս չորս ծագերովը, ուր ավերածություն և անմարդաբնակություն է... Դուն պիտի աղաղակես աշխարհի բոլոր

մարդոց... բացեք ձեր ունկերը ու լսեք... Մարիան կուզե որբախնամ տուն բացել... օգնեցեք... Մարիան կուզե հավաքել դժոխային չարչարանքներե անցած մանուկները, հավաքել և պահել, որ հիմա ալ սովահար ըլլալով չմեռնին... Մարիան այլևս չի կրնա տեսնիլ անոնց մեռած բաց աչքերուն հայացքը պաղ երկնքին հառած... Օգնեցեք, որ մեկ-մեկ հավաքեմ ու պահեմ խեղճ որբուկները, անոնք շքեղ ազգի մը խլյակներ են՝ վերապրողներ են...

XII
ՏԵՍԱՐԱՆ ԴԱՐՊԱՍԻ ՄՈՏ

Գիշերային ՎԵՑԵՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒՆ նստած է «Թռչնոց բույնի» դարպասների մոտ՝ գլուխն առած ձեռքերի մեջ:

Սկզբում լսվում է ՄԱՆՉՈՒԿԻ լացի ձայնը, ապա՝ ՄԱՐԻԱՅԻ խոսքը:

ՄԱՐԻԱՅԻ ՁԱՅՆԸ - Դուն ինչու կուլաս: Քեզի տեղ կըցավի՞... Ես քեզի սիրուն հեքիաթ մը պիտի պատմեմ ու քո ամեն ցավերդ պիտի անհետին... Գիտես՞, հեքիաթը քեզի պես տղու մը մասին է, որ մեծցավ ու քաջակորով, բարի, գթասիրտ, ամենուն սիրելի հերոս մը դարձավ... Ան ամեն բանով քեզի շատ նման է... Դուն մի լար, անուշիկ տղաս... Չէ՞ դու Գողթան մանկտիքներեն մեկն ես...

Հայտնվում է պահակ ՊԵՏՐՈՍԸ՝ նավթալամպը ձեռքին:

ՊԱՀԱԿ - Դուն ինչու՞ չես զարնե դուռը...

ՎԵՑԵՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Կերազեմ...

ՊԱՀԱԿ - Գիշերվա մեջ նստել ես միենակ ու կերազես...

ՎԵՑԵՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Մենակ չեմ... Կողքիս նստած է իմ որբ մանկությունը...

ՊԱՀԱԿ - Հասկցա: Դուն քո որբ մանկությունդ հոս թողեր ես... «Թռչնոց բույնի» պատերեն ներս... Ինչու՞ ես նստել շեմին, ինչու՞ չես մնա ու փարվի անոնց, որոնց օր մը թողել ես...

ՎԵՑԵՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Ես եկա ատոր համար: Սակայն երբ մոտեցա դարպասներուն՝ տեսա որբ մանկությունս շեմին նստած ինձի կսպասեր... Ես ալ դուռն այլևս չզարնեցի, նստեցա մոտը... Եղբայր իմ Պետրոս, բարի տեսա քեզ...

ՊԱՀԱԿ - Դուն կճանչնա՞ս Պետրոսը:

ՎԵՑԵՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Ինձի կբարձրացնեիր ուսերուդ վրա, որ «Թռչնոց բույնի» խնձորի ծառերի բարձր ճյուղերեն խնձոր քաղեի... Կարմիր խնձոր... Անգամ կեղևին տակ կարմիր...

ՊԱՀԱԿ - *(Հուզված)* Շատերուն եմ ուսերուս հանել: Չեմ հիշե... Անունդ չեմ հիշե...

ՎԵՑԵՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Ես հարյուրներեն մեկն էի, որ պատսպարվեցա այս պատերեն ներս՝ մայրիկ Յակոբսոնի գթոթ գուրգուրանքով դարմանելով փոքրիկ, չարչրկված սրտիկս... Հարյուրավոր մանուկներ Հայոց ամայի դարձած տարբեր գավառներեն, տարբեր ընտանիքներեն, տարբեր սովորույթներով, բնավորություններով, բարբառներով, սարսափի իրենց չափով... Անիկա կրցավ իր անհուն սիրով, գուրգուրանքով, համբերությամբ մեզի մոտեցնել իր անձին ու անոնց, որ կծառայեին «Թռչնոց բույնի» պատերեն ներս... Ինչպե՞ս կրցավ մեծ նահապետական ընտանիք մը դարձնել որբանոցը, որ կնստեր ճաշելու, անպայման մայրիկին հետ՝ նույն հսկա սեղանին շուրջը... Հիմա, արդյո՞ք, ան նորեն կճաշե ամենուն հետ հսկա սեղանին մոտ... Եվ ճաշելեն առաջ ամենուն հետ մեկտեղ կաղոթե՞...

ՊԱՀԱԿ - Բան մը փոխված չէ...

ՎԵՑԵՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Նորեն՝ թե մեկը տկարանա «Թռչնոց բույնի» մեջ, ան գիշեր-ցերեկ կնստի հիվանդին սնարին քով ու կխնամե... Երբ հիվանդության վտանգն անցնի, զվարճալի պատմություններ կպատմե, կամ հեքիաթ կկարդա հիվանդ մանուկին համար, որովհետև ան զրկված է իր սիրելի խաղերեն...

ՊԱՀԱԿ - Բան մը փոխված չէ...

ՎԵՑԵՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Եթե մեկու ոտքը քարին առնե, նորեն անպայման անիկա պիտի սպեղանի դնե...

ՊԱՀԱԿ - Բան մը փոխված չէ...

ՎԵՑԵՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Եթե մեկը տխրե և թախծե, ան պիտի նկատե ու ամենաքաղցր խոսքերով սփոփե...

ՊԱՀԱԿ - Բան մը փոխված չէ...

ՎԵՑԵՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Հեռուեն եկա... Մայրիկի հիշողության ճամփաներով եկա, որ անոր հանդիպեմ:

ՊԱՀԱԿ - Բաց են անոր հիշողության դռները... Ներս պիտի մտնաս ու պիտի զրուցես անոր հետ... Ան հիմի անհամբեր քեզի կսպասե...

XIII
ՏԵՍԱՐԱՆ ԴԱՏԱՐԿ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Փոքրիկ լույսով լուսավորված ՄԱՐԻԱՆ համակ ուշադրություն դարձած լսում է դրսից եկող ձայները: Դանդաղ մտնում է ՎԵՑԵՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒՆ: Տեսարանը լուսավորվում է, ՄԱՐԻԱՆ

շրջվում է դեպի ՎԵՑԵՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒՆ:

ՎԵՑԵՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Փարիզի Ֆրեն բանտում, երբ կսպասեի մահապատժիս, մտածումներս քեզ հետ էին, մայր...

ՄԱՐԻԱ - Դու վերապրողներեն էիր... Չորս տարեկան մանչուկ մը, որուն սիրտը ահարկու սարսափներու մեջ մոռցել էր իր անունը, խոսիլն անգամ... Սակայն հույսը միշտ ապրելով հոգիիս մեջ, որ օր մը դուն նորից պիտի թռվռես քո արյունի բարբառը... այդպես ալ եղավ: Քո դանդաղորեն բացվող լեզվի կապանքները վերջապես ընկան և դու մտար քո կորուսյալ աշխարհը... Նախ քո անունը թոթովելով, ապա կանացի գեղեցիկ անուն մը դուն բոլոր իգական սեռի ներկայացուցիչներուս, որ «Թռչնոց բույնին» մեջ կշրջապատեինք քեզ՝ այդ անունով կկոչեիր՝ մեծից փոքր այդ անունով... Մայրիկիդ անունն էր անշուշտ... Մենք քո սխալդ չէինք ուղղե... մինչև որ քիչ մը ալ մեծնալով կրցար զանազանել մեզի քո սրբության սրբոց անունեդ... և դադարեցար զայն բարձրաձայն բարբառել... Տղաս, դու քո սրտի խորերն էիր տարել այն համրորեն պաշտելու համար...

ՎԵՑԵՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Սիրելի մայրս, քո անունը նույնպես: Դու իմ ճշմարիտ մայրս էիր և հարյուր-հարյուրներու մայրը նույնպես... Դուն քո անձնականդ զոհեցիր Հայոց վերապրող մանուկներուս համար...

ՄԱՐԻԱ - Ոչ... ոչ... զոհել՝ ոչ... Ինձ նախախնամությունեն պատեհություն էր տրված ծառայել որբ մանուկներին, անոնց վիրավոր սահմռկած սրտերուն սեր, հավատ, հույս ներշնչել... Դուք իմ զավակներս էիք... դուք բոլորդ՝ հարյուր-հարյուրներդ... Մի ըսե, որ ես բան եմ զոհել... Ոչ: Ատորով ակամա կնսեմացնես իմ ու ձեր միջև եղած անհուն խանդաղատանքը... *(Դադար):*

ՎԵՑԵՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Գիտե՞ս ինչ հիշեցի... Ան շքեղ ընծաները, որ կստանայինք քեզնե, երբ կավարտեինք հեգելը հայոց բառը սուրբ Մաշտոցի տառերով...

ՄԱՐԻԱ - *(Ուրախացած)* Կհիշե՞ս...

ՎԵՑԵՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Մենք սորվեցանք «Թռչնոց բույնի» հայոց դպրոցը, որովհետև դու այն գաղափարին էիր, որ հայ մանուկը նախ և առաջ պարտադիր է, որ անցնի հայոց դպրության ճանապարհով... Հայոց դպրության միջով անցնելով սակայն մենք սորվեցանք նաև արաբերեն, ֆրանսերեն, անգլերեն նույնպես, այնքան վարժ, որ Եվրոպայի և Ամերիկայի լավագույն համալսարանները չկրցան իրենց դռները

գոց պահել մեր առջև... օտար կին մը, դանեմարքացի կին մը իր սաներու միջոցով կրցավ աշխարհին առջև պարզել Հայոց դպրության անընկճելի ոգին...

ՄԱՐԻԱ - *(Մեղմ)* Կհիշե՞ս օրը... Քեզի Կիպրոսի Մելքոնյան կրթական վարժարան ճանապարհելու օրը... Նոր էիր բոլորած քո տասնչորս տարիդ... Կհիշե՞ս... Բեյրութի նավահանգիստը...

ՎԵՑԵՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - «Թռչնոց բույնի» սաներու փողային նվագախումբը Բեյրութ քաղաքի նավահանգիստը հրաժեշտի քայլերգեր կկատերեր... Նվագախմբի բոլոր սաները՝ տղաք ու մանկամարդ օրիորդներ, ծերմակազգեստ ու գեղեցիկ... Օտարներու զարմանքը՝ թե այդպես հանդիսավոր ու՞մ կճանապարհեն... Հետո նավը շարժվեց... Աչքերիս դիմաց հայտնված տաք մշուշ մը կարգելեր հստակ տեսնել ձեզի՝ ափին կանգնածներուդ, որ հրաժեշտի համար կթափահարեիք ձեռքերնիդ... Ես կուլայի... Ես վաղուց-վաղուց մոռացել էի լաց ըլլալը... Սակայն հիմա կուլայի, որովհետև, երբ դու վերջին անգամ գրկեցիր ու կրծքիդ սեղմեցիր ինձ, ես զգացի քո սրտի արագ բաբախը և այտերդ ի վար հոսող արցունքը տեսա...

ՄԱՐԻԱ - Այդպես է... Կգիտակցեմ... Մեծանալով պիտի հեռանաք՝ ձեր ճակատագրի ճամփաներովը... Սակայն ամեն անգամ, երբ Բեյրութի նավահանգստեն որևէ նավ հեռու կնավե ու կտանի ձեզմե մեկը, ես անկարող կըլլամ զսպել արցունքներս...

ՎԵՑԵՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Քո արցունքները հեռացողներուն ընծայված ամենավսեմ պարգև մըն է, անփոխարինելի հարստություն մը...

ՄԱՐԻԱ - Գիտե՞ս, երբ Մելքոնյանը ավարտելեն ետքը դուն անցար ուսանելու Փարիզ Սորբոն համալսարանը, ես իրապես հպարտ էի քեզմով, զավակս... Իսկ երբ համալսարանեն Նոբելյան դափնեկիր Պերեն քեզի հրավիրեց իր հիմնադրած փորձարարական ֆիզիկայի կենտրոնը անձամբ իրեն գործակցելու՝ ես ուրախությունից կորցրել էի գլուխս... *(Հանկարծ առանց ընդմիջման, ողբերգական, շեշտով)* Վահան, իմ անուշ տղաս, քեզ խոշտանգել են բանտը... Ես քեզի հասնեցի գեհենեն ու իմ սրտիս վրա պահեցի, որ նորե՞ն անցնես գեհենի բավիղներեն...

ՎԵՑԵՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Քսաներորդ դարն է...

ՄԱՐԻԱ - Քսաներորդ դարը առանձնահատու՞կ դար է մյուսներու հետ համեմատած...

ՎԵՑԵՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Մեծագույն ոճրագործություններու դար է... Քսանեռորդ դար ըսվածը իր ոխակալ ընդերքեն դուրս ժայթքեց երկու համաշխարհային պատերազմների գաղափարը, նաև ամբողջ ժողովուրդներ տանջամահ անէացնելու հրեշավոր գաղափարը: Ատոր առաջին փորձն էր 1915 թվականի եղեռնը, որպես Հայոց հարցի վերջնական լուծում: Այդպես երկրորդ աշխարհամարտի ժամանակ հրեական հարցի վերջնական լուծումը նույնպես կմտնիր անոր ծրագրերու մեջ...

ՄԱՐԻԱ - Մարդկային հասարակության մեջ ամենեն դատապարտելին պարտադիր դիտված բարոյական օրենքներու խախտումն է: Եթե մեկ անգամ խախտվեցավ բարոյական օրենքներեն մեկը, այլևս դյուրին կըլլա այն խախտել այնքան անգամ, մինչև անբարոյական կոչվածը, ի սարսափ մեզպեսներու, դառնա բնական և ընդունելի... Թուրքիան առաջինն անբարոյացավ աշխարհին առջև, մյուսները գնացին անոր հարթեցրած ճանապարհով... Սակայն, ինչպես ըսեցիր, կհավատամ, թե մեծագույն ոճրագործությունները մեծագույն հատուցումներ կծնին... Ես կըհասկնամ, տղաս, հայը չէր կրնար կողմ քաշվիլ և իր արդար ցասումին ետևեն չերթար...

ՎԵՑԵՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Այդպես եղավ: Բոլոր երկրներու դիմադրական շարժումներուն սփյուռքի հազարավոր հայեր կմասնակցեին ոչ բնավ վերջին դիրքերուն մեջ: Ամեն տեղ մենք կպաշտպանեինք այն երկրները, որոնք մարդասիրաբար տեղ էին տված մեզ՝ բուն հայրենիքից տարագրվածներիս... Կպաշտպանեինք՝ պաշտպանելով Մայր Հայաստանը...

ՄԱՐԻԱ - Քեզի խոշտանգել են, տղաս... Կյանքիդ լույսն առնելե առաջ՝ քեզի խոշտանգել են... Զոհդ թանկ էր, տղաս...

ՎԵՑԵՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Իմ զոհս իմ Մայր Հայրենիքի համար էր: Իմ զոհս Բիբլոսի բարձունքներուն հպարտորեն նստած իմ «Թռչնոց բույն» տան համար էր... Սիրելի մայրս, մենք զոհվելով կրցանք հաստատիլ անժխտելի փաստը... հայուն ապրելու իրավունքը հաղթել է... Հայուն հավատն է հաղթել... Հավատը, որ ի վերջո պիտի ազատագրում ըլլա Հայոց Ամբողջական աշխարհին... Այդ ժամանակ բոլոր մեռածների, բոլոր տանջահարվածների, չարչրկվածների ոգիները խնդության պատարագ պիտի տան երկնքի հեռու ծիրերում՝ ի տես ԱՊՐՈՂՆԵՐՈՒ ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐ հաղթանակի...

ՄԱՐԻԱ - Քեզի տանջել են բանտը, զավակս... Հոգիս հիմա տառապանքով է լեցուն կրկնակի խոշտանգվածներուդ համար... Կրկնակի, քանզի դուք որպես մանուկներ եղեռնի գեհենով անցաք, պա երկրորդ աշխարհամարտին նույնպես խոշտանգվեցաք, տառապեցաք, զոհվեցաք, որպես մարտնչողներ... Ի՞նչ ճակատագիր...

ՎԵՑԵՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒ - Պիտի խորհել ապրողներու մասին, մայր, ապրողներու... Անոնք ութ միլիոն են... Ութ միլիոնի երազանքը, սերը, պայքարն է, որ կապրի... Ատ պայքար մըն է, որով պիտի գոյատևեն քո սիրած, խնամած փայփայած ազգին զավակները... Քո զավակները... նաև:

ՎԵՑԵՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒՆ ընկղմվում է խավարի մեջ:

ՄԱՐԻԱ - Իմ զավակներս... Այո... անոնք բոլորն ալ իմ զավակներս էին... բոլորն ալ...

Ինչ-որ տեղ, հեռու հնչում է մենավոր եկեղեցու մենավոր զանգի անուշ, խաղաղ ձայնը և ՄԱՐԻԱՅԻ կանչող ՁԱՅՆԸ, սկզբում մեղմ, հեռվից, հետո ահագնանալով, տարածվելով:

ՁԱՅՆ - Մարիա... Մարիա... Եկ տուն, Մարիա... Օրդ վերջացավ... էլ մի համառիր... Մարիա... բաց են դռները հավերժական քո օթևանի... եկ... եկ... Մարիա... Մարիա...

Մարիան դանդաղ իջնում է աստիճաններից: Դանդաղ փակվում են դարպասները: Նա դանդաղ գալիս է և նստում առաջնաբեմում դրված բարձր թիկնակով բազկաթոռին: Մենավոր զանգի զանգահարություն:

XIV
«ԹՌՉՆՈՑ ԲՈՒՅՆԸ»

Տեսարանը ողողված է առավոտի պայծառ լույսով: Ծեր ՄԱՐԻԱՆ նստած է բազկաթոռին: Օրիորդ Մարիամիկը դաշնամուրի վրա նվագում է Շնորհալու «Առավոտ լուսոն»: «Թռչնոց բույնի» սաները երգում են...

ՍԱՆԵՐ - Առավոտ լուսո,
Արեգակն արդար
Առ իս լույս ծագեա:
Բխումն ի հուրե
Բխեա ի հոգվույս
Բան քեզ ի հաճոյս
Գանձդ ողորմության,
Գանձիդ ծածկելու

Գտնող զիս արա,
Լեր կեանք մեռելոյս,
Լոյս խավարելոյս
Լուծանող ցավոյս:
Հաստատ հավատով,
Հաստատեա հույսով,
Հիմնեցո սիրով:
Ջայնիվս աղաչեմ,
Ջեռոքս պաղատիմ
Ջիր բարեաց շնորհա...

ՄԱՐԻԱ - Հիշողության ծանր մղձավանջներեն հետո ի՞նչ խաղաղություն... Եվ ինչ շռայլ լուսաբաց... Ան կարծես կցայթե ամենեն խորունկ խորերեն երկնի... Աստված իմ բարի, լույսերիդ մեջեն հույսեր թող ծնին և լցվին հայոց ցավին սկիհը, որով կրնանք պատարագ մը տալ նահատակներու սուրբ հիշատակին... Ապրողներուն ալ բարի մաղթանք տանք... Իջիր խորերեն կապույտ եթերին և լցվիր հոգնաբեկ հոգիներեն ներս, որ Տիրամոր ճիչը այս հին ու տոկուն ազգին հոգուն մեջ այլևս վերածվի հույսի և սիրո պարզ շարականի... Եվ հարության շունչը ըլլա իր շունչը... Աստված իմ բարի...

Մտնում է ՓԱՌԱՆՁԵՄԸ՝ սկուտեղի վրա բերելով տասնյակից ավելի նամակներ: Սկուտեղը դնում է ՄԱՐԻԱՅԻ ծնկներին:

ՓԱՌԱՆՁԵՄ - Բարի լույս...

ՄԱՐԻԱ - Բարի լույս, Փառանձեմ:

ՓԱՌԱՆՁԵՄ - Այս անգամին Մայր Հայաստանեն շատ նամակներ ունիս... Որքան կփափագիմ անգամ մ'ալ երթամ, տեսնիմ... Մարիա, որքան երջանիկ օրեր անցուցի հոն... Գիտե՞ս արդեն ազգականներ ունիմ Հայաստան... Անոնք ինձի ամեն տեղ տարին... Ամենեն զարմանալին այն է, որ Երևանի մեջ ու անոր արվարձաններու մեջ հավաքած մեր ամբողջ Հայաստանը կա... Որքա՞ն հուզվեցա, որ ադ ամենը տեսա... Նոր Ջեյթուն, Արաբկիր, Խարբերդ, Արեշ, Կիլիկիա, Բութանիա, Սուսա լեռ... Հարցուցի ազգականներուս, թե ինչու՞ ադ բոլոր անունները դրած են, գիտե՞ս ինչ ըսին...

ՄԱՐԻԱ - Որ չմոռնան, անոնք մնացին սահմանեն անդին... Չմոռնան, հիշեն, ցանկանան...

ՓԱՌԱՆՁԵՄ - Իսկապես... Դուն ինչպե՞ս գիտցար:

ՄԱՐԻԱ - Կարծեմ երեք տարի է Հայաստան այցելած ու վերադարձած ես

և կարծես այսօր հազար անգամ ըլլալով նորեն պատմեցիր ինձի...

ՓԱՌԱՆՁԵՄ - Հազար անգամ, կարծեմ, քիչ մը շատ ըսիր... Լավ, երթամ, դուն նամակներդ կարդա:

Փառանձեմը ուզում է գնալ:

ՄԱՐԻԱ - Կեցիր, Փառանձեմ... *(Դադար):*

ՓԱՌԱՆՁԵՄ - Ֆեզի է:

ՄԱՐԻԱ - Քեզի կուզեմ գաղտնիք մը վստահիլ, բայց չեմ գիտեր, դուն կրնա՞ս ան պահել մինչև իմ մահս...

ՓԱՌԱՆՁԵՄ - Դուն ինչու՞ կխոսիս մահվանդ մասին... Ի՞նչ գիտցար, թե դուն ինձմե առաջ պիտի մեռնիս...

ՄԱՐԻԱ - Գիտե՞ս, վերջին ժամանակներս անընդհատ կես քուն ըլլա, կես արթուն, ձայն մը կինչե ունկներուս մեջ... Ձայն մը, որ կարծես հեռվեն կուգա և սակայն հոգիիս միջեն կկանչե միաժամանակ... Ձայն մը՝ մոտիկ ու հարազատ...

ՓԱՌԱՆՁԵՄ - Ըսես վերջապես, թե ինչ է ատիկա և ինչու՞ ան անպատճառ կըլլա քեզի մահվան մասին խոսիլ...

ՄԱՐԻԱ - Ան ինձի տուն կկանչե...

ՓԱՌԱՆՁԵՄ - Հարկավ ժամանակն է... 1919 թվականեն ասդին, երբ հիմնեցար աս «Թռչնոց բույնը» քառասուն տարի չես այցելած հայրենիքդ... Հարկավ պիտի կարոտնայիր... Հիմա կառնիս արձակուրդդ և ամիս մը կերթաս Դանեմարքայիդ օդը վայելելու... Ձայն մը քեզի տուն կկանչե, անշուշտ պիտի երթաս...

ՄԱՐԻԱ - Ան ինձի վերին Տուն կկանչե... Հավիտենական տուն...

ՓԱՌԱՆՁԵՄ - Մեղա քեզի, Աստված, դուն ի՞նչ կխոսիս... Ի՞նչ հավիտենական տուն երթալուդ ժամանակն է...

ՄԱՐԻԱ - Բայց բոլորս ալ օր մը երթալու ենք...

ՓԱՌԱՆՁԵՄ - Օրէ առաջ ինչու՞ խոսինք...

ՄԱՐԻԱ - Լսե: Երբ մեռնիմ, ինձի կթաղեք «Թռչնոց բույնի» պարտեզին մեկ անկյունը... Իմ սիրելի մանուկներուս հայացքեն քիչ մը անդին... Սակայն այստեղ... պարտեզին մեջ... անոր դարավոր ծառերեն մեկու մը շուքին տակ...

ՓԱՌԱՆՁԵՄ - Դուն պիտի ապրիս... Եվ դուն պիտի Փառանձեմը չվշտացնես քո մահովդ... Դուն գիտես, Փառանձեմը գեհենե օր մը քո շնորհիվ է ելել... Անոր սիրտը արյունի մեջ է տապակվել... Դուն... դուն երթալու մասին մի խոսե... Փառանձեմը մի տանջե... Դուն քո կյանքդ վտանգելով Փառանձեմը դուրս կորզեցիր այն ատեն, երբ

Փառասծեմը իր ամուսինը և երկու լույս պզտիկները կողբար: Փառանծեմը կկարծեր, թե կյանքն այլևս ապրելու չէ... Կհիշե՞ս, ան կդիմադրեր, երբ անոր կուզեիր կյանքի կոչել... Ան կդիմադրեր... Սակայն դուն սկզբեն, ապա «Թռչնոց բույնին» պզտիկները նորեն իմաստ ներշնչեցին Փառանծեմի կյանքին: Ան հասկցավ, թե մարդն աշխարհ կուգա ոչ միայն իր երջանկության կամ իր տառապանքին համար... Ան աշխարհ կուգա ուրիշին երջանկության, ուրիշին տառապանքին համար... Դուն այլևս չպիտի վշտացնես Փառանծեմը մահվան մասին խոսքերովդ... Ես Աստծուց մեկ բան միայն կուզեմ, ան իմ հոգին ավելի վաղ առնե...

ՄԱՐԻԱ - Ներե, հոգիս, խաղաղվե... Ձայն մը ըսի կկանչե ինձի՝ չըսի, թե այս պահուս պիտի ելնեմ ու երթամ...

ՓԱՌԱՆՁԵՄ - Ես կերթամ... Դուն նամակներդ կարդա... Ինձի բարև ղրկած ըլլան, չմոռնաս ըսել...

ՄԱՐԻԱ - Հարկավ...

Փառանծեմը գնում է: Լույսերը խտանում են ՄԱՐԻԱՅԻ վրա: Նա դանդաղ բացում է առաջին նամակը:

ՄԱՐԻԱ - Սիրելիներս... Ես հիմա կբացեմ ձեր նամակները և անոնց միջեն ձեր ձայնը պիտի խոսե ինձի... Հեռուներեն ձեր հարազատ ու տաք ձայնը պիտի պատմե ձեր ուրախություններուն, ձեր ցավերուն, ձեր կարոտներուն մասին... Իմ անչափ սիրելի զավակներս...

Հեռուներից հնչող ձայներն արձագանքվում են, Մարիա Յակոբսոն կնոջ ունկերում, պարուրելով նրան խաղաղիկ հանգստությամբ...
Ձայներ նամակներից.

- Մայրիկ, մայրիկ, ինչպե՞ս ես, հոգիս...

- Մայրիկ, կուզեմ քեզի հաղորդել, որ դոկտորության իրավունքս առի բարձր գնահատականով... Շուտով պիտի գամ քեզի ու «Թռչնոց բույնին» այցելության... Օհ, որքան եմ կարոտել...

- Մայրիկս... Անուշիկ մայրիկս, ծնվեցավ իմ դուստրս ու ես անոր քո անունովդ կոչեցի...

- Սիրելի մայրս, Հայաստանին մեջ ապրելով, հասկցա, թե ինչ երջանկություն է հայրենիք ապրիլը... Գիտե՞ս, ամենքը հայերեն կխոսին: Գիտե՞ս, Երևանի իմ պատուհանեն Արարատը կերևա...

- Մայր Մարիա, իմ ամենեն հարազատս, գործերս արդեն շտկվեցան... Փոքրիկ արհեստանոց մը կրցա բացել քո ուղարկած դրամով: Հիմա իմ արհեստը կբանեցնեմ, որ սովրել էի «Թռչնոց բույնի»

մեջ: Շուտով ամբողջությամբ պիտի կրնանամ ետ դրկել դրամը, որ գիտեմ «Թռչնոց բույնի» դրամարկղեն էիր վերցրած... Դուն փրկեցիր ինձի, հոգիիս չափ սիրած մայրս...

- Մայրիկս, ինչպե՞ս ես, հոգիս... Կխնդրեմ, կաղաչեմ, քեզի քիչ մը խնայե... Դուն ամենեն սիրելի մայրիկ... Դուն ամենեն մեծ մայրիկ... Դուն քեզի քիչ մը խնայե... հոգիս...

Արագ մտնում է մեծ սաներից մեկը՝ ԼԵՎՈՆԸ, մարզական հագուստով և ֆուտբոլի գնդակը թևի տակ:

ԼԵՎՈՆ - Մայրիկ Մարիա, ամենքս ալ պատրաստ ենք Բեյրութ իջնալու: Օրիորդ Աշխենը ըսավ, թե քանի որ նախ քաղաք պիտի այցելենք, նոր միայն ծովափ՝ վայել չէ քաղաքի մեջեն մարզական հագուստով երթալ... Իսկ պարոն Վաղարշակը կպնդե, թե եթե բոլոր մարզիկներս «Թռչնոց բույնին» մարզական հագուստով և մարզական քայլով երթանք շատ գեղեցիկ և ընդունելի կըլլա... Մանավանդ որ ծովափը, երբ մյուսները լողնան, մենք քիչ մը անդին մարզական հրապարակին մեջ ֆուտբոլ պիտի խաղանք... Դուն ի՞նչ կկարծես, մայրիկ...

Նամակները ընկած են հատակին: ՄԱՐԻԱՆ նստած է փակ աչքերով: ԼԵՎՈՆԸ զգալով տարօրինակ մի բան, մոտենում է և շշուկով.

ԼԵՎՈՆ - Մայրի՞կ... Մայրի՞կ...

Դուրս է նետվում օգնություն կանչելու:

Լույսը դանդաղ, սահուն խտանում է:

Հզոր ողբերգական երաժշտությունը ծավալվում է տեսարանում: Ամեն կողմից հայտնվում են ճերմակազգեստ տղամարդիկ փշե պսակներով: ՃԵՐՄԱԿԱԶԳԵՍՏ ՕՐԻՈՐԴՆԵՐԸ և ԿԱՆԱՅՔ նշենու ծաղկած պսակներով, ՃԵՐՄԱԿԱԶԳԵՍՏ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ վառված մոմերով: Տեսարանում հայտնվում է նաև ԼՈՒՍԵ ԽԱՉԸ:

Տղամարդիկ սպիտակ թիկնոց են գցում Մարիայի ուսերին, Կանայք նշենու պսակ դնում նրա գլխին: Մանուկները նրան մյուսների հետ ուղեկցում են դեպի ԼՈՒՍԵ ԽԱՉԸ...

ՎԵՐՋ

ԱՆՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ՏԻՐԱՄՈՐ ՃԻՉԸ
(փաստագրական ողբերգություն)

Խմբագիր՝ Վահան Խաչատրյան
Շապիկի ձևավորումը՝ Կոնստանդին Ավագյանի

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0633159

I 105925